


78

U-49



78

Մ-49

25 OCT 2010

Հրատարակութիւն Թիֆլիսի նայոց երածը. բնկերութեան № 1

Գումար գիւղ 1500-ամեակի և սպազ. 400-ամեակի տարիւ

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԵՐԱՎԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆԻ ՎԵՐԱՑ

Առաջնախորհութեան

ԱՊԻՐԻԳՈՒՆ ՄԵԼԻՔԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ռ Ո

Արտադրութիւն էկոնոմիկա» հլիք. № 17.

1914



$$\frac{78}{U^2 - 49} \text{ wr} \quad (29)$$

Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Երած. բնկերութեան № 1

Գրեթե զիւտի 1500-ամեակի եւ սպագր. 400-ամեակի առքի

700  
20-155

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԳՐԵՑՑՈՒԹԻՒՆԸ

# ՀԱՅ ԵՐԱՎԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵ՛ՍԱԿԱՆԻ ՎԵՐԱՅ

Digitized by srujanika@gmail.com

Digitized by srujanika@gmail.com



10. 11. 12. 13. U

Արագատիս «Հասկերամիս» Ելիզ. № 17.

1914



# Յ Ա Վ Ե Ն Գ Ե Ր Ա Խ Թ Ի Ւ

Երկու խօսք

Խ Ա Զ Ե Բ (N E U M E N).

## I Առողանութեան խազեր

- 1) Երբ և ում ձեռքով են մտել առողանութեան խազերը.—2) Հայ աղբիւրները այդ խազերի մասին.—3) Յունական աղքեցութիւնը այդ աղբիւրների վերայ.—4) Շեշտը հայոց հին լիգւում.—5) Առողանութեան խազերի ձեռքը զանազան քերականութիւնների մէջ.—6) Համեմատութիւն հայ և յունական առողանութեան խազերի ձեռքի:

## II Երաժշտական խազեր

- 1) Յունական և մեր երաժշտութեանց անմիտիթար վիճակը.—2) Վերանորոգչական փորձը Յունաստանում և նորա արձագանքը մեզ մօտ.—3) Երբ և ում ձեռքով են մտել երաժշտական խազերը մեզ մօտ.—4) Հայկական աղբիւրները երաժշտական խազերի մասին («Սիօն» շարաթաթերթ 1867 թ. «Սիրուն ըպրօսարան» և «Գարասաքալեան»).—5) Նմանութիւններ յունական և հայկական երաժշտ. խազերի:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԹԸ ԶԱՅՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ  
(ԳԱՅՄՄԱՆԵՐ):

- 1) Սխօլաստիկ բացատրութիւններ.—2) Քրեղանտէրի պապադիկէն.—3) Ութը ձայների վարդապետութիւնը ըստ պապադիկէների.—4) Կաթոլիկ եկեղեցու զամաները.—5) Շարականի վերլուծութիւնը.—6) Հայկական «ութը ձայների» նոյնութիւնը բիւղանդական զամմաների հետ.—Ա(Չ), Բ(Չ), Գ(Չ), Դ(Չ), Մառերի ձայնական նշանակութիւնը:

Ա. ԵՐԵՎԱՐԱԲԻ



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր նպատակն է եղել այս ուսումնասիրութեամբ ցոյց տալ յունական երաժշտութեան մեծ ազգեցութիւնը մեր հին երաժշտութեան տեսականից այս գէպըում զրութեան սիստեմների (խաղեր, ձայնանիշներ) ու զամանեների վերայ և յունական երաժշտութեան միջոցով պարզաբանել հայ երաժշտութեան այն մութն ու կնճռոտ հարցերը, որոնց պատճառով հայ երաժշտութեան պատմութիւնը իրօք անյայտութեան և անորոշութեան մէջ է մնացել և մնում:

Այս նպատակին համար նախ պէտք էր մեր հին գրականութեան՝ թէ ձեռագիրների և թէ տպագիրների մէջ ցաք ու ցրիւ պահուած փոքրիկ հատուկտորներն ու յիշատակութիւնները փնտոել, հաւաքել և ի մի ամփոփել մի գործ որ մի շարք տարիների ընթացքումն է յաջողուել մեզ այն չափով, ինչ չափով որ հանդէս է զրուած մեր աշխատութեան մէջ:

Ապա անհրաժեշտ էր ծանօթանալ յունական երաժշտութեան հետ, ուսումնասիրել այն զրականութիւնը, որը յառաջացել է յունական-բիւզանդական երաժշտութեան շուրջը, որոշելու համար այն սերտ առնչութեան աստիճանն ու չափը, որ գոյութիւն է ունեցել մեր և յունաց երաժշտութիւնների մէջ:

Յունական-բիւզանդական երաժշտութեան պատմութիւնը դժբախտաբար դեռ շատ մութ, չուսումնասիրուած խնդիրներ ունի, իսկ նոցա երաժշտութեան ուսումնասիրութիւնից է կախուած և մեր այնքան առկախ մնացած խնդիրների լուծումը. այսպէս մեր խաղերի վերծանութեան խնդիրը դեռ շատ երկար ժամանակ կմնայ անլուծելի, քանի զեռ յունական խաղերի նշանակութիւնը վերջնականապէս լուսաբանուած չէ, իսկ «ութը ձայների»՝ զամանեների խնդիրը հնարաւորութիւն ունենը ուսումնասիրելու, լուսաբանելու, որովհետեւ, յունականում արդէն մի որոշ լուծում ստացել է: Եւ ինչո՞ւ, որովհետեւ՝ ինչպէս մեր այս աշխատութիւնն է ծայրէց ծայր ցոյց տալիս, մեր մէջ երեեցած բոլոր երաժշտական երեսյթները (եկեղեցականի մասին է

իսութը, աշխարհիկի մասին ոչինչ չգիտենք), սկսած հինգերորդ  
և էլ առաջ եղող դարերից մինչև նոյն իսկ 19. դարու կէսերը,  
մի տեսակ արտացոլումներ են յունական կեանքում պատահած  
երաժշտական շարժումների:

Մեր ուսումնասիրութիւնը կատարելիս հետեւալ աղբիւրներն  
ենք ուսնեցել ձեռքի տակ. պատմագիրներից՝ Ղազար Փարպեցի,  
Յովիաննէս Դրասիանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Ստե-  
փիսնոս Օրբելիան, և Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնը,  
թերթերից՝ Հանդէս ամսօրեայ 1895 թ. մարտ, ապրիլ, 1896 թ.  
դեկտ., Սիօն շաբաթաթերթ 1867 թ. № 8., հայկական պապա-  
դիկ՝ Գարասարալեան, ձայնագրած շարական, քաղուածք,  
ժամագիրը, պատարազի արարողութիւն, ձեռագիր քերակա-  
նութիւններ՝ Երզնկացի № 324 (Գէորգեան ցուցակ). Վարդան  
№ 2370 (Կարինեան ցուցակ), Կղեմէս № 778 (Կար. ցց.), ապա  
հետեւալ համարներ՝ № 2307, 2317, 2325, 2309, 2322, 2314,  
2367, 2295, 2310, 2320, 2361, 2360, 1908, 2366, 2369 (Կար.  
ցց. մատ. ս. էջմիածնի), ձեռագիր շարականներ՝ № 1573,  
1586, 1572, 1600, 1581, 1609, 1604, 1582 (Կար. ցց.), ձեռագիր  
աւետարաններ՝ վղոսկրեայ աւետարան ս. էջմիածնի և լուսա-  
տիս աւետարան Լազարեան ձեմարանի, Արիստակիսի «վեր-  
լուծութիւնը» № 2370, 2297 Կր. ցց., «Սիրուն զրոսարան»  
№ 275 (Կար. ցուցակ), յունական գրականութեան վերաբերեալ  
Բուրգանլու-Դուզուղբէ, Վեստվալ, Գայսսեր, Ռիբուլս և, որ  
ամենագլուխաւորն է, պրօֆ. Օսկար Փլայշէր իւր Neumen-  
studien եռհատոր աշխատութիւնով:



## ԽԱԶԵՐ (NEUMEN)

Զայնագրութեան ամենահին սիստեմերիցն է խաղը, որ եւրոպական ընդհանուր բառով ուստի է կոչւում։ Ծագումով խաղերը հնդկական են և Քրիստոսից դեռ տասնեակ դարեր առաջ դործ էին ածւում նոցա սուրբ գրքերի մէջ, հնդիկներից անցնելով խաղերը յոյներին ընդհանրացան, դարձան բոլոր քաղաքակիրթ և քրիստոնեայ ազգերի սեփականութիւն, այդ ազգերի հին դարերի ամբողջ հոգեւոր երաժշտութիւնը այդ խաղերով՝ նոյմաներով գրուեցին իրեն անդնահատելի աւանդ իրենց յեանորդներին թողնելու համար։ Ռւստի և հասկանալի ու ըմբռոնելի է ներկայումս զանազան քրիստոնեայ ազգերի այն ձրգումը, որով աշխատում են դարերի ընթացքում մոռացուած, փոշու հաստ շերտերի տակ թաղուած խաղերի լուսարանութեամբ և դացա օգնութեամբ վերարտարերելու հին եկեղեցական երաժշտութիւնը իր այն սկզբնական կուսական ձևով, ինչ ձևով որ եղել է զրի անցկացնելու խաղաւորելու շրջանում։

Խաղը իւր դարգացման ընթացքում մի քանի շրջաններ է ունեցել, որոնցից ամենահինը և սկզբնականը այն շրջանն է, երր խաղը իրեն լոկ առողմանութեան նշան է գործածուել։ Հետո այդ պատճառով էլ չենք կարող մեր երաժշտական խաղերի մասին խօսել, առանց ի նկատի ունենալու նրա սկզբնական և ամենահին շրջանը։

### I Ա. ՌՈՒԳԱՆՈՒԹԵՅ Ե ԱՆ ԽԱԶԵՐ.

Առողմանութեան նշանների ուսմունքը մեր ձեւքն է հասել միջնադարեան հայ քերականութիւնների միջոցով։ Ամենահին քերականագէտներն են՝ Դաւիթ փիլիսոփան, Ստեփաննոս Սիւնեցին՝ երաժշտագէտը, Գրիգոր Մագիստրոս, Վարդան, Յովհաննէս Երզնկացին և ուրիշները։ Առքա բոլորն էլ իրենց քերականու-

\* Այս բառը յունական ծագումն ունի և նշանակում է նշան, ազդ (ոտքով, ձեռքով, գլխով, աչքով)։

թիւնները կամ՝ դոցա մեկնութիւնները զրելիս օգտառում են ամենամեծ չափավ յունականից. հէնց երգնկացին, որից մեծ մասսամբ պիտի քաղենք մեզ հարկաւոր տեղեկութիւնները, զրել է երկու տեսակ քերականութիւն. մէկը լոկ պարզաբանութիւն է Դիոնէսիոս Թրակացու քերականութեան՝ Մագիստրոսի և եսայի վարդապետի մեկնութիւնների համաձայն, և միւն աւելի ընդարձակ, էլի նոյն աղբիւրներից, որոնց մէջ մտնում է, ինչպէս ինըն իւր յիշատակարանում յիշում է, նաև Արիստակիսի «Վերլուծութիւնքը»:

Յայտնի է որ Դիոնէսիոս Թրակացին Արիստարքոսի աշակերտն է, իսկ Արիստարքոսը՝ Արիստոֆան Բիւզանդացու (†180 թ. ա.), որին վերակրուում է յունաց առողանութեան խաղերի զիւտը, ուսափ և ակնյայտնի պարզ է այն ճանապարհը, որով յունական՝ հնդիկներից վերցրած, խաղերը մեզ մօտ են անցել. Մեր քերականագէտները ըստ յունական քերականութիւնների ձևակերպելով իրենց ձեռնարկները վերցրել են այն, ինչ որ նոցա կարենոր է թուացել. և ինչ կար աւելի կարենոր և ժամանակի պահանջ, քան հէնց առողանութեան օրէնքները և նոցա ծառայող խաղերը՝ այն նշանները, որոնց մեր մէջ չլինելու պատճառով նոքա իրենց աշակերտներին սովորեցնելիս՝ «ի սպասաւորութիւն եկեղեցւոյ», շատ անգամ նոյն իսկ ապարդիւն արիւն ըրտինք էին թափել. և նոքա վերցնուում են այն՝ թուով տասը, խաղերը, որոնց գործածութիւնը անհրաժեշտութիւն էր առողանութեամբ կարգալու համար:

Որոշակի տեղեկութիւններ չկան հնից մնացած, թէ երբ և ում ձեռքով են առաջին անգամ այդ խաղերը մեր. երկիրը բերուել և գործածութեան մէջ մտել. սակայն գժուար չէ մօտաւոր ժամանակաշրջանը որոշելը:

Հայ գրականութեան ոսկէ դարում, երբ աւագ և կրտսեր թարգմանիչները յոյն դպրութիւնն հետ նաև յոյն քաղաքակրթութեան թարգմանն ու պատուաստողն եղան մեր աշխարհում, պէտք է նաև այս խաղերի ներմուծման սկիզբը վնասուել: Այդ ժամանակաշրջանում, երբ մի տեղնդային արագութեամբ ամեն տեղ՝ Հրէստանում, Յունաստանում, Հոմոնում, Գերմանիայում, Ալաւոնների մէջ և բոլոր քաղաքակրթ քրիստոնեայ պղերի մէջ, եկեղեցական գրքերը խաղաւորւում էին, չէին կարող մեր թարգմանիչները այդ հոսանքից ազատ մնալ, չաղդուել, չօգտուել, ժամանակի գիտութիւնների և յունական դպրութեան հիմքը կադմող քերականութիւններից չսովորել այդ խաղերի գործածութիւնը և չաշխատել տարածելու նաև իրենց հայրենիքում, որի

մտաւոր բարձրացումը նոցա կեանքի կէտն նպատակն էր եղել:

Արիստակէս՝ ըստ Զարբանալեանի, Լաստիվերացին իւր Պվեր-լուծութիւնք»-ի մէջ ասում է «Աքանչելի վարժեալըն հայոց երիցս երանեալ Մեծն Թարգմանիչը, զոր երկսիրարար երկաւք ջանացեալք և յայլասեռն ազգաց հեռակաց զաստուածաշունչ կտակս յորդորջեալ, և յաթենական նահանգսն վարժեալք և Պիրճըերական զործից հմտացեալք և բարունաբար աստուածային տառիւքս անդրադարձութեամբ իրրե յորդարուղի հոսման աղբիւրիւ զամենեան զմեղ լուսաւորեալ, զի վերստին լուսաւորիչքն մեր աստուածյայնեալ»... իսկ այդ պերճըերական կամ քերական կամ քերթողական զործերը, ինչպէս շարունակութեան մէջ բացատըրւում է, այդ առողանութեան խազերն էին,

Մեր պատմագիրներն էլ ունեն այդ իրողութիւնն ապացուցանող փոքրիկ, մասնակի տեղեկութիւններ. ս. Սահակ Պարթևի մասին կրտսեր թարգմանիչներից Ղազար Փարպեցին այսպէս է զրում. «... Սահակայ, որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զրազում գիտնովքն յունաց, եղեալ կատարելապէս հմուտ Երգողական տափիցն... և փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւք»՝ մի տեղեկութիւն, որից երևում է, թէ ինչպէս ս. Սահակ Մեծը, այնպէս էլ ինքը՝ յիշատակութեան արժանի համարող պատմիչը՝ երկուսն էլ 5.դարու մարդիկ, այդ երգողական տառերի մասին դադափար և ծանօթութիւն ունէին<sup>1)</sup>:

Ուրեմն ըստ Ղազար Փարպեցու և ըստ Արիստակէսի առողանութեան խազերի ներմուծումը հինգերորդ զարում՝ այն էլ աւագ թարգմանիչների ձեռքով պիտի կատարուած լինի:

Թէ ինչ աստիճան ընդարձակ ծաւալ և զործածութիւն են ստացել գործնական կեանքի մէջ խազերը ներմուծումից յիտոյ, այդ ևս անյայտ է և անորոշ, որովհետեւ ձեռապքեր խազաւորուած կամ անխաղ այդ և յաջորդող մի քանի դարերից մեր ձեռքը ամեննեին չեն հասել: Սակայն մենք արամագիր ենք ընդունելու, որ մինչև 8-րորդ, 9-րորդ և նոյն իսկ մինչև 10-րորդ դարու սկիզբները մենաշնորհ է եղել գիտնական՝ յունական դպրութեանը ծանօթ, վարդապետներին, եպիսկոպոսներին և կաթուղիկոսներին միայն. հակառակ գէպքում անհասկանալի կլինէր Յովհաննէս Դրասիանակերտու 10-րորդ դարու սկզբներում իրրե զովեստ յիշատակութիւնը իմաստասէր (ութերորդ դար) կաթուղիկոսի մասին, թէ

<sup>1)</sup> Երգողական տառերը նոյն իսկ եթէ երաժշտական խազեր հասկանանք, էլլ իրողութիւնը չի փոխւում, որովհետեւ դոցա գիտութիւնը առողանութեան խազերի ծանօթութեամբ է պայմանաւուած:

«յաջորդէ զաթոռն ս. Մեծ իմաստասերն Յովհաննէս, որ հմուտ և տեղեակ գողով բոլոր Քերթողական շարագծաց, մասանց բանի մասնակաց...»:

Միւս կողմից պարզ երևում է, որ սկզբնական դարերում նոքա ամեն ինչ չեն խաղաւորիլ առողանութիւնն նշաններով, ինչ պէս յետագայ 12-րորդ դարից այս կողմը սովորութիւն է դարձել, այլ երկի մի քանի սաղմոսներ, ալէլուներ և թիրևս մարդարէական ողբեր. օրինակ հէնց աւետարանը, որ զոնէ մեր ունեցած փաստերով<sup>1)</sup> 10-րորդ դարուց սկսած խաղաւորուած է ըստ ամենայնի, դեռ 9-րորդ դարում կարծես թէ թիւ է կարգացուել՝ 887 թուին գրուած աւետարանում<sup>2)</sup> բացարձակապէս ոչ մի խաղ չէք գտնի:

Մեր քերականագէտները առողանութիւնը<sup>3)</sup> համարում են վերծանութեան մի տեսակը՝ «վերծանութիւն ըստ ենթագատութեան և Վերծանութիւն ըստ առողանութիւնն ի գեղեցիկ առնելոյ զոլորակն ըստ հրամանի առողանութեանց<sup>4)</sup>. իսկ առողանութեան հրամանն է՝ «Սրութիւն եւ թժութիւն, կցութիւն եւ զատողութիւն յօդաւոր բացականչութեանց», ասում է 2325 հ. ձեռ. (Կր. ցց), այսինքն առողանութիւն է կոչւում յօդուած ձայների ել և էջը (սրութիւն և թժութիւն) և նոցա կցուած ու զատ զատ արտասանութիւնը<sup>5)</sup>

Այդ որոշման համաձայն մեր առողանութիւնը, ինչպէս և յունացն է, բաժանում է ըստ սեփի չորս կարգի՝ ոլորակ, ամանակ, հազար եւ կիրք<sup>6)</sup>: Սակայն կան քերականութիւններ, որոնց մէջ չորրորդ կարգը՝ կիրքը չկայ, ինչպէս հմ. 2326, 2322 ձեռագրներում, յետոյ նաև Սիմէօն Զուղայեցու կազմած քերականութիւնների մէջ, որոնք լատինական քերականութեանց հետևողութեամբ են կազմուած<sup>7)</sup>:

<sup>1)</sup> Յայտնի է փղոսկրեայ աւետարանից 987 թուին գրուած:

<sup>2)</sup> Լազարեան Ճեմարանի լուսատիպ աւետարանը.

<sup>3)</sup> Առողանութիւն բառը թարգմանութիւն է ոքոչանձարակութիւնների: 2311 հմը. Կր. ցց. առողանութիւն=առերգութիւն, ոգել, երգել.

<sup>4)</sup> № (2358. ձեռ. Կար. ցց.)

<sup>5)</sup> Մի ուրիշ տեղ (հմ. 327. Կր. ցց.) առողանութիւնը ասացութիւն ասի և գարձեալ կոչի արտիստ եւ զարդ բանից, որ հակառակ չէ վերկի որոշմանը:

<sup>6)</sup> Ըստ կղեմէսի (հմ. 778 Կր. ցց.) Ոլորակ, հազար, ամանակ և կիրք:

<sup>7)</sup> Այդ վերջին կարգը յունաց քերականագէտներն ել շատ անդամ առողանութեան մաս չեն համարում:

## Ո Լ Ո Ր Ա Կ

«Ոլորակ, ասում է Երգնկացին (324 հմբ. Գ. ցց.), է բացականչութիւն պատկանաւոր ձայնի, թէ ըստ վեր սաստկութեան շեշտիւն, թէ ըստ հարթութեան բթիւն, թէ ըստ պարբեկութեան պարուկաւն»։ Ուրիմն ոլորակ է կոչւում ձայնը, որ երբեմն բարձրանում, դառնում է շեշտ, երբեմն իջնում, դառնում ըութ, և երբեմն ել և էջք անում, դառնում պարոյկ։

Այդպիսով Ոլորակը երեք մասից է բաղկածած, «քանզի(նոյն ձեռագիրը) բանաւոր կենդանիաց ձայն երիք այսոքիւք յաւդի՛ շեշտիւն, որ է սուր, թթիմ, որ է կարճ կամ ծանր, և պարուկաւն, որ է շրջումն վերուստ ի վայր»։

### Ա. Շ Ե Մ

«Շեշտ, որ Օքսիա» (օչէն), ասում են քերականագէտները, Շեշտը ցոյց է տալիս ձայնի վեր բարձրանալը. «վեր սաստէ և սրէ ի բառան զձայն վանկին, որոյ վերայ դնի, օր. Սահակ, Պետրոս. ինչ. (Կղեմ. հմբ. 778 կր. ցց.)»։ Սակայն թէ քանի աստիճան, կամ թէ գոնէ ընդհանուր սահմանը՝ ինչքան տարածութեան մէջ է ձայնը իւր ոլորումներն անում, չեն ասում մեր քերականագէտները։

Զայնը «վեր սաստանայ՝ շեշտիւն» (Երգնկացի հմբ. 324) որ է բարձրանայ, նախ ընութեամբ յորժամ ձայնաւորաց այսոցիկ պատահի, որք են շեշտք, ա, ե, ի, բանդի յորդելակ ունին զձանն, որ և վերսաստ ասի, և բ. յորժամ տքա ընդ ինքեանս առնուն զձայնորդսն՝ որք ոչ նեղեն զբերանն և զձայնն. ասին և նոքա յորդք և են այսք, ադ, ադ, ադ, ամամ գմդ, գմդ, ծած, լալ, խախ և այլ սոյնպիսիք... և գ. ձայն յորդելակ յոր և իցէ ձայնաւորս և ի հեգս ըստ ենթագրութեան տեղւոյն, ի բողոքելն կամ ի սաստեն, կամ ի հրամայելն, կամ ի թշնամանեն կամ յողոքելն, և այլ սոյնպիսիք, որք են մասունք ենթագրութեան՝ առնուն վերսաստութիւն՝ յորդ ըստ շեշտի»։ Ուրեմն ընութեամբ ձայնը շեշտուում և բարձրանում է, երբ ա, ե, ի, ձայնաւորներին է հանդիպում. երկրորդ՝ երբ այս ձայնաւորներին կցւում են այնպիսի բաղաձայներ, որոնք չեն նեղում բերանը և ձայնը. և երբորդ դրւում է այնպիսի ձայնաւորների կամ վանկերի վերայ, որոնք «ըստ ենթագրութեան տեղւոյն» արտայայտում են բողոք, սաստումն, հրաման, թշնամանք, ողոքանք և այլն։

Եթէ շեշտը վերջին վանկի վերայ է, կոչւում է յանկաշեշտակ<sup>1)</sup> եթէ վերջընթեր վանկի վերայ է՝ յարաշեշտ. օր. Պետրոս. եթէ վերջինից երբորդ վանկի վերայ է՝ նախայարաշեշտ. օր. Դիկլիկոն:

Այս անունները թարգմանութիւն են յունական համապատասխան Օքսիտոնի, Պարօքսիտոնինի և պրօպարօքսիտոնինի. նաև զործածութիւնը յունական է, որի գէմ բողոքում են մեր բոլոր ձեռագիրները ամենահնից սկսած, հաստատելով թէ շեշտը հայոց զրական լեզում միայն վերջին վանկի վրայ է դրում. և այդ պատճառով է, որ այդ օքսիտներն արտագրող քերականագէտները երկրորդ և երրորդ վանկի շեշտի զործածութիւնը ցոյց տալու համար վերցնում են յունական բառեր՝ «Պետրոս», Դիկլիկոն», զատնելով հայերէնի մէջ այդպիսի շեշտ ունեցող բառեր։ Երգնկացին (հմք. 324), ինչպէս և Վարդան (2370 կր. ցց.) շեշտին Սուր մակղիրն են տալիս։

### Պ. Բ Ո Ւ Թ

Բութը՝ յունական ւարիան<sup>2)</sup> (Յաքէնա), հետեւել բացատրութիւններն ունի. «Իսկ ասելն ըստ հարթութեան բթիւն, շարունակում է Երգնկացին, ցուցանէ զի որք հարթ ձայնը են, և ոչ յորդ և սուրք, բութը ասեն»: —«Բութը ընդդէմ շեշտին, զձայն վանկին հարթէ<sup>3)</sup> և ի վայր խոնարհցուցանէ, որ զան, արդ՝ (Կղեմ. 778 կր. ցց.): —«Բութ հարթ որ ոչ ի վեր և ոչ ի վայր» (հմք. 2297 կր. ցց.):

Այս տեղեկութիւններից կարելի է եղբակացնել, որ բութը ըստ ինքեան հարթ, հանգիստ, խաղաղ ձայն է ցոյց տալիս և յատկութեամբ յորդ և սուր չէ, իսկ շեշտի համեմատութեամբ նա ձայնաստիճանով ցած է։

Զանապան զործածութիւն ունի. «Նախառառաջին տառիւքս այսոքիւք, Բէնիւ, Սէիւ, Ռիւ, զի ըստ նեղութեան շրմանցն ձայնք սորտ նեղք և տըկարք են, երկրորդ ի փաղառութեանց, և գ. ի մասունս ենթադառութեանց»։ Նմանապէս ձայնաւորներից իւ, ու, աւ տառերը բութ են առնում՝ շրմունքները նեղացնելու պատճառով։

Հետաքրքիր տեղեկութիւն է տալիս բութի զործածութեան մասին Վարդան (2370 հմք. կր. ցց.), «Իսկ բութն բազում անգամ

<sup>1)</sup> Նահ՝ շեշտովոր։

<sup>2)</sup> Ըստ Վարդանի և ուրիշների

<sup>3)</sup> 325 համարում՝ կարթէ.

դիցի ի վերայ շարակարգեալ բանիցն կամ ի սկիզբն կամ ի մէջն, բայց յորժամ ի կատար հասանէ, բութն ի շեշտ փոխի, զի դիւրական ոլորակ է և ոչ սաստկական»: Եւ յիրաւի բութը թերի տպաւորութիւն է թողնում «բութն և ենթակէտն դանկատարութիւն բանին յայտնեն» (2358 կր. ցց.):

Բութի մասին վէճ է եղիլ, թէ սա իսկապէս ոլորակ չէ. օրինակ վարդան այսպէս է բացատրում. «բութն՝ ոչ է իսկապէս ոլորակ, այլ փաղառնական», որովհետեւ, շարունակում է նա, ընդամէնը երկու ամանակ կայ, որոնցից երկարը համապատասխանում է պարոյկին, իսկ սուրբ շեշտին:

Վարդան բթին այսպիսի մակդիրներ է տալիս. ծանր, խոնարհ, մանր. 2358 համարը՝ կարճ, և ծանր:

#### զ. Պ Ա Ր Ո Յ Լ

Պարոյկը, որ պերիսպաւմնի է<sup>1)</sup> կոչւում, բարդ է և կազմուած է շեշտից ու բութից. «քանզի ոչ այլ ինչ է պարոյկ՝ ասում է երգնկացին, քան թէ սուր ունելով զակիզբն և բութ զվերջն, որ և գոյանս յ յերկուց ձայիցն, որպէս ի սեէ և ի սպիտակէ գորշն:» Եւ այդ բարդ կազմութիւնը բնական է, «մերս ձայն յօդաւոր է, որպէս ցուցաւ, սակա տառիցն զանազանութեան և բարախման և երիւրման գոչմանս մերոյ»: Հետեապէս և իւր մէջ պիտի միացնէր այն երկու խաղերի յատկութիւնները՝ բարձրութիւնն ու ցածութիւնը, յորդութիւնն ու հարթութիւնը. և այդպէս էլ է. «զյորդ և նուազ, ի մի զիր կամ ի հեզ, կամ անուն, կամ ի բան, զի սկիզբն յորդէ՝ և ի վերջն սղի. (Երգնկացի), կամ «պարոյկ է ել և էջ ձայնի ի միոջ բառին, որ ելուզանէ զյորդն ձայն ի սկզբանն եւ խոնարհէ ի վերջնումն» (Կղեմէս):

Զայնը պարոյկանում է չորս եղանակով, ասում է երգնկացին. «Նախ բնութեամբ երկարացն»<sup>2)</sup> որպէս ցուցաւ, որք են է՛ և օ՛ և վասն այսորիկ պարոյկ, զի յեթն խոնարհին երկոցունց վախճանն, և ելուզանէ զյորդ ձայնն ի սկիզբն՝ այսպէս էլ, օր, վասնզի երկուց ձայնաւորաց զտեղի ունին... բ. պատահմամբ պարուկանայ, յորժամ երկրաբրառացն դիպի, և են այսը՝ աւ, եւ, էւ, իւ, ու, ափ, էի, օփ, վասն բեկանելոյ սոցունց զձայնն. իսկ գ.ի սուր ձայնորդմն պարուկանայ, որպէս յայր, յիշ, յին, զի յոր-

<sup>1)</sup> 2311 և 2370 կր. ցց.:

<sup>2)</sup> բնութեամբ երկար տառերը՝ է և օ, որոնք անքըմառք (քիմքին չկպչող) են կոչւում, նոյն յունաց էտան և օմեգան են. շատ անգամ օ-ի տեղ հէնց օմեգա էլ գրւում է. յաճախ էլ օմեգան ոչ թէ օ-ի այլ ոլ-ի է փոխադրած:

ժամայն բաղաձայնքն դնին ի վերայ նորա, ի հեզսըն որ զշըթթունս նեղեն և զձայն, թէ 1 գիր եղիցի, թէ 2 և թէ 3, պարոյկը են՝ օր, արբ, իսկ դ, պարուկանայ ձայնն ի զօրութենէ ենթադրութեան բազում մասանց, որպէս ասացաւ, ի խանդաղատեն, կամ յաշխարելն և այլն»:

Կան ձեռագիրներ, որոնք պարոյկի գործածութիւնը միայն հարցական բառերի վրայ են դնում, այսպէս օր, հմր. 307 քերականութիւնը՝ Պի թուականի, ասում է, պարոյկը դրում է հարցականների վերայ, որովհետեւ դոքա նախ որ երկրարբառ են և երկրորդ հարցականի ձայնը պարոյկի զօրութիւն ունի: Նաև հմր. 2317-ն ասում է, «պարոյկն ի վերայ հարցականացն է անկ»: Այս առթիս երգնկացին այսպիսի բացատրութիւն է տալիս. «Րայց գիտելի է և այն՝ զի զձեւ պարուկին՝ գտանեմք եղեալ և ի հարցականս, օր. ո՞ւր էիր... որ ինձ թուի թէ յղզս երկրարբառոցն պարոյկ է այս յառաջնոցն եղեալ, իսկ յառայ համբակադոյնքն, հարցական կոչեցին, կամ այլ ազգ, զի ձայն հարցականին զգօրութիւն պարոյկին ունի, քանզի բեկումն է ձայնի, ապա թէ ոչ ոչ գտանեմք զհարցականիս ի Ժ առողանութիւնս»:

Երբ պարոյկը վերջի վանկի վերայ է, կոչւում է յանկապարոյկ, օր. որպիսի, երակլէս, յարապարոյկ՝ երբ վերջնթեր վանկի վերայ է, օր. Պաւլոս, երբեմն և նախայարապարոյկ, երբ երրորդ վանկի վերայ է վերջինից հաշուած, օր. Յակովէպոս, Կղնդէպոս:

Այս անուներն ես թարգմանութիւն են յունարէն Պերիսալօմնենի և պրոպերիսալօմնենի. նոյնպէս և գործածութիւնը յունական է:

Այսպիսի մակդիրներ են տրւում պարոյկին՝ պարբեկութիւն, շրջարերութիւն, շուրջառ. այս բառերը ինչպէս և պարոյկը յունարէն պերիսալօմնօնի կամ լատ. circumflex-ի<sup>1)</sup> թարգմանութիւններն են:

#### Ա Մ Ա Ն Ա Կ

Ամանակ ցոյց տւող նշանները թւով երկու են. Երկար և Սուլու<sup>2)</sup>

Երկարը գրւում է երկար ձայնաւորների վերայ. 1) Երկար են ընութեամբ է և օ ձայնաւորները. սոքա ասութածային են կոչւում: 2) Երկար են ընութեամբ երկրարբառները. 3) Եր-

<sup>1)</sup> № 2357 Կր. gg. ձեռգմ. պարոյկը երկու տեղ ունի, պարոյկ՝ վերջին վանկի վրայ և նախապարոյկ՝ վերջնթերի վերայ:

<sup>2)</sup> Հստ վարդանի երկարն՝ երկայն, սուղ՝ կարճ կամ սոսկ:

կար են դրութեամբ ա, ը, ի ձայնաւորները. սոքա երկամանակ են՝ կարող են երբեմն իրրև երկար և երբեմն իրրև սուղ գործածուել: Երկար են, եթէ սոցա յաջորդում է այնպիսի բաղադայն, որ չի նեղում շրթունքները: 4) Երկար են դրութեամբ այն բոլոր ձայնաւորները, որոնց յաջորդում են մի վանկի կամ երկու վանկի և կամ երկու բառի զուգորդութեանց մէջ երկու կամ աւելի բաղադայներ. օր. մարդ, ոսկը, տատրակ, ձագսազի գետհանգարտ: 5) Երկարանում են ձայնաւորները նաև այն դէպքում, երբ նոցա յաջորդում է կրկնակի: <sup>1)</sup>

№ 2317 ձեռագիրը աւելացնում է «Երկարն ի վերայ հիացականաց» գնահատելի տեղեկութիւնը:

Սուղը դրւում է կարճ ձայնաւորների վերայ: 1) Սուղ են՝ ո, է, և ձայնաւորներն ունեցող այն վանկերը, որոնք հասարակ բաղադայնով են վերջանում, օր. ներող, 2) սուղ են երկամանակները՝ ա, ը, ի, երբ սոցա յաջորդում են հասարակ, բայց ձայնն ամփոփող բաղադայներ: 3) Սուղ է վանկը, եթէ հէնց ձայնաւորով է վերջանում՝ երբ այդ ձայնաւորը երկրարբառ չէ և նորան բաղադայն չի յաջորդում, օր. թի, մի, նա, է, ո: 4) Սուղ է վանկը, երբ ընութեամբ երկար ձայնաւորներին ու երկրարբառներին յաջորդում է մի ուրիշ ձայնաւոր կամ մի ամփոփող բաղադայն, օր. նաև, առ կարճացնում է եւ-ին, և օդ, ուր դ-ն կարճացնում է օ-ին:

չ Ա գ Ա գ

«Հագագ՝ որ շունչ առնուս» ասում է հմ. 2217<sup>2)</sup>) ձեռագիրը. սակայն ինչպէս յունաց մէջ, այնպէս էլ մեզ մօտ շնչառնական նշանակութիւնը վաղուց կորցրել են:

Հագագի նշաներն են՝ մթաւ և Սոսկ, որոց վարդան այսպէս է բնորոշում՝ թաւ՝ խոշոր կամ թանձր, սոսկ՝ ողորկ կամ ղեաշկ և այսպիսի գործածութիւն վերակրում նոցա՝ «թաւն ի վերայ ձայնաւոր զրոց թաւացելոյս» սոսկն ի վերայ ձայնաւոր զրոց սոսկացելոյ». հմ. 2370. եր. 76: Սակայն ոչ մի օրինակ չի բե-

<sup>1)</sup> Կրկնակ են կոչւում այն բաղադայները, որոնք իսկապէս երկու բաղադայնի միացումն են կազմում. այսպիսի կրկնակ բաղադայներ են զ, լ, լս, շ, ջ, ո, ց, տառերը: Այդ կրկնակը կարող է լինել թէ նոյն վանկի մասը, ինչպէս ըաջ, թէ յաջորդ վանկինը՝ մասաւ, և թէ յաջորդ բառինը՝ հանգո՛ զմեզ:

<sup>2)</sup> Հագագն՝ բառ. բառն ողորկ և խոշոր, իսկ զիսոշորն և զողորկն թաւ և լերկ զրերն առնեն:

ըռւմ, որից խմանախնք թէ ինչպէս է ձայնաւորը թաւանում և լերկանում. և չէր էլ կարող, որովհետև թարգմանում է յունական սպիրիտուս ասպերի և սպիրիտուս լենիսի նշանակութիւնը՝ սպիրիտուս ասպերը յունաց մէջ նշանակութիւն ունի և ի-ի տեղ է ծառայում, իսկ մենք և տառն ունենք, ուրեմն և չէր կարող Վարդանը հարիւր գրելու փոխարէն արիւր գրել իրու օրինակ:

Անհասկանալի է մեր լեզուի վերաբերմամբ նաև Երզնկացու բացատրութիւնը. «Եւ պիտոյ են սոքա ոչ ի ձայնաւորսն՝ այլ յանձայնս, որք խոզոր և ողորկ բարբառ արձակեն, խոզոր ի թաւիցն, ողորկ ի լերկիցն. և են թաւք թ, փ, ք, և լերկ պ, կ, առ Արդ ի վերայ սոցա եղեալ առողանութիւնք, զի մի արասցէ զքարն՝ կար, և զթաւն՝ զտօ ելն:» Մեր լեզուի մէջ թաւ և լերկ բաղաձայների համար արդէն առանձին առանձին տառեր ունենք և նոր նշանների կարիք չկար:

Աւելի հասկանալի է ւ-ի վերաբերմամբ եղած օրէնքը 3325, 2317, 2325 հմր. ձեռագրներում. «Թաւն՝ յորժամ ւ-ն ըստ կիսաձայնի բաղաձայնից վարի, զնի ի վերայ առ ի զատանել ի ձայնաւորէն, օր. հաշիւ»: Սակայն սորա համար էլ միայն թաւն էր հարկաւոր, սոսկը բոլորովին տեղ չունի գործածութեան մէջ և քերականութեանց մէջ ևս չէր յիշուի, եթէ յունական քերականութիւններից զիտակցօրէն օգտուեին:

### Կ Ի Բ Ք

Կիրքի նշաններն ևս, որպէս հագաղինը, վաղուց իրենց իսկական նշանակութիւնը կորցրել են. այդ կարգի գրութիւնը երերուն է, հմր. 2309 և 2322 կր. ցց. ամբողջ առողանութիւնը բաժանում են նոյնիսկ միայն երեք սեռ՝ խմբի—հագաղն ու կիրքը միացնում են նշաննակ անուան տակ, որի նշաններ են թաւ, մակալէտ, ենթամնայ, որով ստորը, որ կէտագրութեան մասն է, և առակը, որ բոլորովին անպէտք էր, դուրս են ընկնում: Սովորաբար կիրքի համար երեք նշան կայ. 1) ապաթարց (ըստ Վ.րդ. առանց.) կամ մակալէտ, 2) ենթամնայ կամ (ըստ Վարդանի) ներքսաղբական, 3) ստորատ կամ (ըստ Վ.րդ. և ըստ 2297-ի) ներեւահատ:

Ապաթարցը գրւում է ի նախորի վերայ բառից բաժանելու համար, ապա դ-ի վերայ, երբ և պէտք է կարդալ, ապա այն տեղերում, ուր ա-ն զեղջուած է, որի համար էլ նշանը այրաթարց է կոչուել. օր. վեր'բերող:

Ենթամիւան<sup>1)</sup> նախ կապում է այն բարդ բառերը, որոնք ձայնաւորով չեն միացած. ինչպէս օր. երկ-ձայն, և երկրորդ՝ դրւում է տողադարձութեանց ժամանակ. օր. զր-թած:

Ստորատը կէտադրութեան մաս կաղմիլով մտնում է և առագանութեան նշանների մէջ, ասում է Երգնկացին, «որով յայտնի լինի, թէ վարդապետութիւն կիտին խառն է յառողանութիւնս։ Ստորատն զանկատարութիւն արամախոհութեան ցուցանէ, օր ոչ ես, այլ չնորհն Աստուծոյ։ Ստորատը բացակայում է նաև այնպիսի քերականութիւնների մէջ, որտեղ բոլոր 4 սեռն էլ ընդունելի են (օր. № 778, 2314, 2367 կը. ցց.)։

Այս երեք նշաններն եւ իրենց գործածութեամբ և ձևերով  
համապատասխան են յունաց պաֆոսի խազերին՝ ապօստրօֆու-ին  
ջիւֆեն-ին և դիաստոլէ-ին

Կիրքով վերջանում են մեր քերականութիւնների տուած տեղեկութիւնները առողջանութեան խաղերի մասին։ Այդ տեղեկութիւնների ի մի ամփոփումը և ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեր քերականագէտները ինչ որ գտել են յունաց քերականութիւնների մէջ վերցը են անխտիլ կերպով։ Սակայն այն բորորը ինչ որ աւելորդ են մեր լեզուի համար կամ օտար և բեր կարող էին դառնալ, գործնականի մէջ մուտք չեն գործել։ Այսպէս՝

Ա.) Շեշտը դրում է բառերի միայն վերջին վանկի վերայ, ինչպիսի ձայնատոր ողում է լինի այլ վանկում <sup>2)</sup> և այն էլ ոչ ամեն բառի, այլ տրամաբանական կամ քերականական շեշտ ունեցողների:

Օրինակներ ու էջմ. փղոսկրեայ աւետարանից, «Հայր արդարեա աշխարհ զքեզ ոչ ծանեաւ՝ այլ ևս զքեզ ծանեացյ. — Զե՛ իցէ հաւու խօսեցեալ. — վայ ձեղ, — մի՛ հաւատացէք. — բայց ասեմ ձեղ. — է որ հարիւր, է որ վաթսուն. այնպէս եղիցի և ազգիս այսորիկ չարի».<sup>3)</sup> Հմր. 155 և 156 ձեռագիրների երկաթագիր պահպանակից, ուր շեշտը երկարի ձև ունի. «Բայց զայս զիտասջիք. — և ոուք եղե-

<sup>1)</sup> Երբ տառը հեզի հետ է միացնում, կոչւում է կիսենթամնայ. Իսկ երբ կից բառերն է միացնում՝ ննթամնայ:

<sup>2)</sup> Բայի օտար յատուկ անուններից:

<sup>3)</sup> Ա. Հջմիածնի փողուկ, աւետարանում շեշտը փոքրիկ

ը՞նկը պատրամստք. —ասէ Պետրոս. —ոչ զիտեմ զձեղ ուստի էք»:  
Հմբ. 153. Աստուածաշունչ. «Եւ երկիր էր աներևոյթ և անպատ-  
րաստ. և խաւար ի վերայ անդնդոց. —և ասաց Աստուած եղիցի  
լոյս և եղե՛ լոյս»:

Բ) Պարոյիլ որում է հարցականների վերայ, ինչպէս մի  
քանի քերականութեանց մէջ էլ ասուած էր: Օրինակներ փող աւ.  
«Զի՞ լսու. —ընդէ՞ր ոչ կարիցեմ. —զանձն քո գիցե՞ս. —Ուստի՞ ու-  
նիցիս. —Ո՞ ոք ի ձէնչ կամիցի. —զի՞նչ առաւել առնէք»:<sup>1)</sup> Երկթ  
պհալ. «Զի՞ է. —մուր են. —Ո՞ պատմեաց. —Կերամ արդեօք. —ոչ  
տպաքէն. —զի՞նչ մեծութիւն»:

Գ) Բութը մեր ընթացիկ կէտաղբական նշանակովթիւնն  
ու գործածութիւնն ունի: Օր. փղս. աւ. «աշխարհ զքեզ ոչ ծանեաւ՝  
այլ ես զքեզ ծանեայց. —ասէ ցնա Յիսուս՝ տուր ինձ ըմպել. —  
այլ ես ասեմ ձեզ՝ սիրեցէք զթշնամիս ձեր»: № 153 Աստուա-  
ծաշունչ. «և կերար ի նմանէ՝ անիծեալ լիցի երկիր ի գործ  
քո. —և արդ՝ աւասիկ»:

Դ) Հազարից միայն թան է գործ ածում և այն էլ այն  
և տառերի վերայ որոնք իբրև վ պէտք է հնչուեն, օր. աղաւնի,  
թևաւոր և այլն:

Ե) Ամանակներից սուղը գործ է ածում երբեմն ը-ի  
վերայ մանաւանդ տողալարձութեան ժամանակ և երբեմն  
ա-ի վերայ, օր. ոը՞ն-կունք, անրժը՞շ-կիլի, և ա՞սէ տէր ցՅիսուս  
և ա՞յս են թագաւորութիւնք, և որպէս ա՞ռ 2) Ռոբովամ:

Զ) Երկարի գործածութիւնը պարզ չէ, որովհետեւ ծնուզ  
շփոթուած է շեշտի ծեւերի հետ:

Է) Կիրքի նշանների գործածութիւնը ըստ ամենայնի  
համապատասխան է քերականութիւնների տուած օրէնքներին:  
Քերականութիւնները այսպիսի ձևերով են ներկայացնում  
մեղ առողանութեան խաղերը:

<sup>1)</sup> Փղոսկր. աւետարանում հարցականը պարոյկի ձեւ ունի:

<sup>2)</sup> Օրէնքով Ո՞ կրկնակից առաջ ա-ն երկարում է. բայց  
որպէսզի մտքի շփոթութիւն առաջ չգայ, առ նախորի վերայ  
սուղ է գնում տարբերելու համար (է)առ բայցից:



Եթէ մեր առաջ բերած փաստերին աւելացնենք նաև մեր և յունական առողանութեան խաղերի ձեւերի նմանութիւնը, այն ժամանակ բոլորովին ապացուցած կլինենք, որ մեր առողանութեան խաղերը սկզբնապէս յունական են եղել և Յունաստանից կամ յոյն գաղութներից են մեզ մօտ անցել:

Ահա և այդ ձևերի համեմատութիւնը՝

Προσωδία	Οξεῖα	$\text{O}_\text{---}$	թ	թթ
"	βαρεῖα	$\text{B}_\text{---}$	թ	թ
"	περιστωνίνη	$\text{P}_\text{---}$	կարով	կ
"	μάκρα	$\text{M}_\text{---}$	երկար	շ
"	βραχεῖα	$\text{B}_\text{---}$	վերած	օդո
<u>Πνευμաτա</u>				
Προσωδία	σασεῖα	$\text{S}_\text{---}$	թեւ	թ
"	φολή	$\text{F}_\text{---}$	առկ	թ
<u>Παջի</u>			ջիր	
απօԵրօփօն	?	$\text{A}_\text{---}$	մկրանիր	թ
սթռ	?	$\text{S}_\text{---}$	եւրանի	թ
(սո) ծաճտօլի	?	$\text{C}_\text{---}$	մբռանի	թ

Առողանութեան խաղերի մասին այլևս ոչ մի տեղ յիշատակութիւն չեք գտնի, բացի Արխտակէս գրչի՝ (ըստ Զարբանալեանի) Լաստիվերտցու բերած հատուածից, որի մէջ բացի սովորականները, յիշուած են և մի քանի բոլորովին նոր անուններ, որոնք աւելի երաժշտական խաղերին են վերաբերում (ինչպէս քաշ, դիր, զարկ) քան առողանութեան խաղերին, բայց որոնց մասին դըժքախտաբար ոչ մի բացատրութիւն չենք գտնում շաբունակութեան մէջ. Մայր Աթոռի մատենադարանի երկու ձեռագիրներից մէկում՝ № 2297 կր. ցց. շարունակութիւն կազմող թերթերն են պակասում, իսկ № 2370-ի (կր. ցց.) մէջ ուղղակիայդ կտորովն էլ

վերջանում է: Բերենք և այդ հատուածը, այսպիսով առողանութեան խաղերի մասին մեր հին գրականութեան մէջ եղած բոլոր տեղեկութիւնները ի մի հաւաքած կլինենք:

Արխտակէս գրիչ, № 2297. 131 երես. «... է իսկ անգաւոր զքերթողական գծիցդ կարգուած և զրազմայոյլ խըմբիցըդ շարժուածք յուղիւք բանիւք և բազմամասնեայ բայիւք նոցին վերտառութեամբ արտակերտել շաղկապելով զմի առ միոյ, զի որ ոք ոչ գանդաղեսցի տքնել յիմաստս յայս վարժաւոր առ ի մակացութիւն գրոց աստուածայնոյ, կարասցէ անսայթաք սորաւք արոհել ըստ որոշման զճանողակին, և դյանկաւոր, և զյոքնամասնեայ զյեռահիւսիցն իսկ զյանգուածման, առ ի միմիանց սուրբ և յստակ բացատրել: Սոքաւք թէ ոք տքնէ, ստուգիւ իսկ ճանաչէ որիշ որիշ և զտեղեան պիտանին և զիւրական զերալրութեամբն զերունակ զգիրս զլսագիր, զանշեշտն և զշեշտաւորն. իսկ և Տէր

ունի զշեշտաւորն, զիշեշտն և զիւրակ, զնաց և  
զիշտ: զկարի, և զիշտ, զացոր յ և զիւրացոր, որ  
է նորդանիութշտ, և զշեցուն, զշեցունի, զշեցունի,  
որ եւս ցռան, զկարի, զշեշտն և զիւրակ արցուն

բովանդակ լրիւն զսկաման առղիցդ և զկատարածին, հանդերձ սեպհական և հմտական եթ-կապովքն, և ոչ այլ ընդ այլոց եթերով խամրացուցեալ զգիրսն»:

## II ԵՐԱԾՄԱԿԱՆ ԽԱԶԵՐ.

Յունական երաժշտական խաղերի, ինչպէս և երաժշտութեան ուսումնասիրութեան նկատմամբ շատ քիչ գործ է կատարուել մինչև այժմ: Մինչ կաթոլիկ եկեղեցու երաժշտութեամբ և խաղերի վերծանութեամբ երկու դար շարունակ զրադուել են բազմաթիւ հոգևորական թէ աշխարհական զիտնականներ և ի վերջոյ գտել են այդ խաղերի ընթերցանութեան զադանիքը, քանի որ այդ ժամանակի պահանջ էր նկատուել և բզիսել էր կաթոլիկ եկեղեցու հոգևոր երաժշտութիւնը զտելու, մաքրելու և բեփորմի ենթարկելու ձգտումից, բիւզանդական եկեղեցում հէնց այդ ըեփօրմի պահանջի՝ ձգտման բացակայութեան պատճառով եկեղեցական երաժշտութեան ուսումնասիրութիւնը և կարգաւորումը շատ

երկար և երկար դարեր անհոգութեան էր մատնուած:

ԺԶ և ԺԷ դարերից սկսած ժամանակակիցների վկայութեամբ արդէն խաղերի նշանակութիւնը սկսում է տարածայնութիւնների տեղիք տալ, զանազան տեղերում զանազան կերպով էին հասկանում. կամ աց կամաց այդ ազօտացած յիշողութիւնն էլ անյետանում է, և ուսուցիչները սովորեցնում են ձեռքի շարժումների օգնութեամբ ու բերանացի, թէև արտազրովները այդ խաղերի գոյութիւնը շարունակում էին ամենայն ժրաշանութեամբ և հոգածութեամբ պահպանել իրենց անթիւ ու անհամար ձեռագըրների մէջ:

Եյդպէս շարունակուում է մինչև 1818 թուականը, երբ վերջապէս Կոստանդնուպոլսի հեղեցական ժողովը՝ կամհնալով եկեղեցական երաժշտութիւնը վերջնական այլանդակումից և կորուստից փրկել, որոշում է մի նոր գրութեան սիստեմ մտցնել հեղեցու մէջ, ընտրելով 20 խաղ արդէն գոյութիւն ունեցող 64 հին խաղերի ձևերից, ի հարկէ բոլորովին նոր և նոր հատ առնչութիւն չունեցող կամայական նշանակութեամբ:

Այս սիստեմը մանրամասն նկարագրել է Բուրգառուտ-Դուկուդրէն, սրա ուսումնասիրութիւնից պարզ երևում է, որ եթէ հին սիստեմի հիմնական գծերը պահուած են այս նորի մէջ, բայց շատ նոր էլեմենտներ էլ մտել են վերջինիս մէջ, որոնք հնում գոյութիւն չունէին, ուստի և այս նոր սիստեմով ամենին չի կարելի առաջնորդուել հնի նշանակութիւնը պարզաբանելու համար:

Եւրոպացի գիտնականները 18-րորդ դարի սկզբներից սկսած հետաքրքրուել նաև յունական երաժշտութեամբ: Նորացին մօտեցան երկու ահսակէտով, ոմանց համար այս հարցն էր դրուած, թէ մի ժամանակ այնքան հռչակուած հին Յունաստանի երգն ու երաժշտութիւնը որտեղ է, ինչ է եղել. նորա հաւատում էին, որ՝ եթէ միջնադարեան հայածանըներն ու թշուառութիւնները նոյն իսկ ստեղծագործող աղբիւրը չորացրած լինէին, սակայն էլի մի ժամանակ այնպէս ասատ բղխող աղբիւրը պիտի որ իր հետքը այսպէս թէ այնպէս թողած լինի. և այդպիտիները աշխատում էին հնի մնացորդներն ու հին աղբիւրի հետքը յոյնի միջնադարեան երաժշտութեան՝ եկեղեցականի մէջ որոնել:

Թուով աւելի շատ գիտնականների համար հետեւել երկրորդ հարցն էր հետաքրքրողը, թէ ինչ է ներկայացրել իրենից և ինչ ձև է ունեցել բրիստոնէական երաժշտութիւնը հնում՝ քրիստոնէութեան տարածումից անմիջապէս յետոյ, թէ հելլեն աշխարհը քրիստոնէութեան առաջին դարերի համար ինչքան մեծ նշանակութիւն է ունեցել հէնց երաժշտական տեսակէտից, թէ յունա-

կան եկեղեցական երաժշտութիւնը ինչպէս օրինակ է ծառայել կաթոլիկ եկեղեցու երաժշտութեան համար և ինչքան մեծ ազդեցութիւն է ունեցել նորա վերայ, որ վերջինս ոչ միայն վերցրել է ամբողջովին Կυρie eleison-ը (Տէր ողորմեան), Gloria-ն (Փառքը) և շատ ուրիշ երգեր, այլ և յունական երաժշտութեան տեսականի հիմնական գծերը: Եւ ահա զիտնականները իրենց համար նշանաբան են դնում՝ հազար տարով իրարից բաժանուած եկեղեցիների երաժշտութեան այդքան երկար ժամանակամիջոցում կրած փոփոխութիւններն և իրար հետ ունեցած առնչութիւնը պարզաբանել՝ համեմատութեան մէջ դնելով այդ երկուսը ցոյց տալ այդ երկուսի սկզբնապէս նոյն լինելը:

Դժբախտաբար թէ առաջին և թէ երկրորդ տեսակէտով մօտեցող զիտնականների բոլոր ջանքերն էլ մեծ մասամբ իզուր են անցել. նորա վերջնական հետեւաքների չեն հասել, որովհետեւ պակասում էր այն միջոցը, որով նորա հնարաւորութիւն պիտի ունենային յունական երաժշտութեանը ծանօթանալու. մինչ նորա լատինական հին եղանակների մասին կարող էին գաղափար կազմել, ընդհակառակը յունական երաժշտութեան վերաբերմամբ ոչ մի հնարաւորութիւն չունեին, որովհետև յայտնի չէր և մինչև այժմ էլ ամբողջովին յայտնի չէ յունական երաժշտական խաղերի նշանակութիւնը և այդ խաղերի տակ թագնուած յունական եկեղեցական երաժշտութիւնը, թէս պակաս մեծ չէր նաև այնպիսիների թիւը, որոնք զանազան փորձեր էին արել այդ խաղերը վերծանելու նկատմամբ:

Ամենից լուրջ կերպով զրադուել և զրադում է յունական խաղերի վերծանութեան խնդրով Բեռլինի համալսարանի պրոֆ. Օսկար Ֆլայշերը\*), որը իւր մինչև այժմ լոյս տեսած երեք հատոր „Neumen-studien“ կոչուած գրքերի շաբթով առաջին անգամ լուրջ հիմքերի վերայ գրեց յունական խաղերի նշանակութեան պարզաբանութիւնը և յոյս ունի մօտիկ ապագայում յունական շարականների վերծանութիւնն ևս յաջողութեամբ վերջացնելու:

Մեծարդոյ զիտնականը իւր արտակարգ յաջողութիւնը այդ խնդրում իր ընտրած՝ յայտնից գէպի անյայտը դիմող, մեթոդովն է բացատրում: Միւսները միշտ հնից են սկսել, խաղերի պարզութիւնից խափուելով, և կամայական տուեալներով են

\* Սրա աշխատութիւններն ենք սկզբից և եթ աչքի առաջ ունեցել. կարունակինք և այժմ նորան հետեւելու, մանաւանդ որ այս խնդրում նա միակ հեղինակաւոր ներկայացուցիչն է համարւում ամբողջ Եւրոպայում:

առաջնորդուել, որովհետև ոչ մի ուրիշ տեղից օգնութիւն ստանալու հնարաւորութիւն չունէին, իսկ պրօֆ. Ֆլայշէրը սկսում է համեմատաբար (հին, միջին և ուշ) ուշ՝ կարելի է ասել ամենավերջին շրջանի խազերից, որից յետոյ նոցա նշանակութիւնը սկսում է աղաւաղուել, և իր ուսումնասիրութեան համար իրեւ հիմք ծառայեցնում է «rapadilice»-ի ցուցմունքները, որոնք յետոյ նորա համար Արիադինէի կծիկի դերն են կատարում և առաջնորդում նորան անձանօթ և մուժը խազերի լաբիւրունթուր:

Եթէ յունական խազերի և երաժշտութեան ուսումնասիրութիւնը այս գրութեան մէջ է, մեր երաժշտութեան ուսումնասիրութիւնը աւելի վատթար վիճակի մէջ է, որովհետև նախ որ, ինչպէս յունականում, մեր եկեղեցին ևս ցայժմ ոչ մի ձգտում չի ցոյց տուել իւր հոգեոր երաժշտութիւնը բեֆօրմի ենթարկելու, դահլու, մաքրելու, գարերի ընթացքում ստեղծուած խաւնուփնթոր գրութիւնից նորան ազատելու, և երկրորդ՝ եւրոպացի բանասէրները հին գեղագրուեստի չորացած ազրիւրի հետքն ու փշտանքները չեն ուղեցել որոնել այնաեղ, որտեղ գուցէ ոչ մի ազգիւր չի եղել և կամ սկզբնական քրիստոնէական երաժշտութեան յայտնագործումը նոքա կորած մոլորած, Արարատի շուրջը խըմբուած, մի բուռը ժողովրդի մէջ որոնելու համար շատ հեռում են զգացել իրենց:

Մեզ մօտ ևս՝ պէտք է ենթադրել, 17. դարի սկզբներից ըսկած խազերի նշանակութիւնը սկսում է աղաւաղուել և նոքա կարճ միջոցից յետոյ նոյն իսկ բոլորովին անգործելի են դառնում, թէև արտագրիչները շարունակում են էլի ամենայն հոգատարութեամբ իրենց ձեռագրերը խազերով զարդարել Եղանակների ուսմունքը սկսում են բերնէց բերան աւանդել մինչև 19-րդ դարու վերջերը՝ 1870 թուականը, երբ վերջապէս Գէորգ Դ. կաթողիկոսը՝ Համբարձում Բաբայի հնարած նօտաներից օգտուելով, ձայնագրել է տալիս և տպագրում եկեղեցական շարականներն ու երգերը, այդպիսով ընդմիշտ ազատելով գոնէ այնուհետև լինելիք աղաւաղումներից:

Մեծագործ կաթողիկոսի ցոյց տուած խնամքն ու գուրգուրանքը եկեղեցական երաժշտութեան անաղարտ պահպանութեան համար եղակի երեոյթ է Խաչատուր Տարօնեցուց յետոյ մեր այդքան երկար ու ձիգ դարերի պատմութեան մէջ: Դժբախտաբար թէ նորա և թէ նորան շրջապատղների երաժշտական հասկացողութիւնը այնքան լայն չէ եղել, որ կարողանային խնդիրը իր բոլոր լրջութեամբ և ծանրութեամբ հասկանալու. այդ պատճառով էլ նոցա կատարած գործը ճակա-

տագրական՝ մեր երաժշտութեան համար մեծ թիրութիւն ունի:

Ինքը կ. Պօլսում սնուած, մեծացած և այնտեղի գործածական եղանակներին, որոնք աւելի զօրեղ կերպով պիտի յոյներից աղջուած լինէին, սիրահար, հրամայում է կաթուղիկոս դառնաւուց յետոյ՝ առանց որևէ ժողովի համաձայնութեան՝ միահեծան կերպով հայ կեանքից կտրուած այդ օտար գաղութի եկեղեցական եղանակները ձայնագրել և այդ միայն գործածական դարձնել այնտեղ, ուր հայ և հայ եկեղեցի կայ. Գէորգ Դ-ի բերան Մանկունի եպիսկոպոսը շարականի յառաջաբանում կարծես թէ աշխատում է իրենց արածը արդարացնիլ, ասելով թէ Եջմիածնի նուիրակները և ներկայացուցիչները Պօլսում նստած հսկելիս են եղել Պօլսի հայ եկեղեցական երաժշտութեան վերոյ և աշխատել են Եջմիածնի աւանդութիւնը անաղարտ պահել: Սակայն ով հաւատաց այդ բացատրութեանը և այդ նուիրակների հրաշագործ զօրութեանը: Եթէ իրօք նոյնն է եղել, ինչու էին Պօլսից եկած կաթուղիկոսը և նորա հետեւրդները հալածանք հանում տեղական՝ Եջմիածնի Մայր Աթոռի եղանակների դէմ, ինչու հէնց Եջմիածնի եղանակները չէին ձայնագրել տալիս:

Իրեւ պատմական երեսոյթ այս վերանորոգչական փորձն էլ յունական ազգեցութեամբ է յառաջ եկել: Արդէն յիշել ենք 1818թ. Պօլսի յունաց եկեղեցական ժողովի մասին, որը նպատակ էր դրել յունական եկեղեցական երաժշտութիւնը կորստից աղատելու համար հին 64 խաղերից ընտրած 20 խաղերով գրութեան մի նոր սիստեմ մտցնել եկեղեցու մէջ: Ահա այս ժողովն է, որ միհնոյն ժամանակ իթան է գառնում հայ հոգեորականութեան համար իրենց երաժշտութեան մասին ևս փոքր ինչ մտածելու, մտածմունք, որը զործ է զառնում միայն կէս գար յետոյ:

Այդ նոր սիստեմն է օրինակ գառնում նաև այդ ժողովին ժամանակակից Համբարձում Բարայի համար «Հայկական ձայնանիշներ» ստեղծելու կամ սարքելու գործում, սա ևս՝ ինչպէս յոյները, վերցնում է մեր մէջ գործածական հին խաղերից թուով 20 համ և յօրինում զրութեան մի նոր սիստեմ, որով ձայնագրուած են մեր եկեղեցական երաժշտական բոլոր գրքերը, և որով երկար ժամանակ՝ մինչև մեր օրերը առաջնորդում էին նաև մեր զպրոցներում:

Երաժշտական խաղերի երբ և ում ձեռքով մտած լինելը մեզ մօտ աւելի որոշ է քան առողջանութեանը: Կիրակոս Գանձակեցին իրենից ոչ շատ առաջ ապրող (12 դար) Խաչատուր Տարօնեցումասին խօսելիս հնատեալ նշանակալից տեղեկութիւնն է տալիս. «Սա երեք զիսազն ի կողմանս արելից զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարարեալն յիմաստնոց, որ ցայն ժամա-

նակաս չե էր սփոնալ ընդ աշխարհու: Սա եկեալ զրեաց և ուսոյց բազմաց»: Ուրիմ մինչեւ 12-րորդ դարը այդ խազերը գեռ մուտք չէին գործել մեր աշխարհը և առաջին անգամ Խ. Տարօնեցին է բերում արևելք այդ խազերը՝ զարարեալոն յիմաստնոց, անմարմին եղանակները մարմնաւորելու:

Ամենայն հաւանականութեամբ հէնց ինքը Խաչատուրն էլ խազաւորել է մեր շարականը (սա եկեալ գրեաց), կամ հիմք է դրել և նորա աշակերտները շարունակել են, որի համար և ժամանակակիցների առաջ մեծ հոչակ է ստացել իւր երաժշտական արուեստիւր:

Խաչատուր Տարօնեցու բերած խազերը իրենց ձևերով նորութիւն չպէտք է լինէին մեղ մօտ. նորա նոյն առողջանութեան նշաններն էին և նոցա բարդութիւնները, բայց նոցա ստացած երաժշտական նշանակութիւնը նոր էր և գալիս էր էլի դրսից:

Դժբախտաբար՝ ինչպէս յունաց մէջ այնպէս էլ մեր մէջ, սկզբնական, ինչպէս և միջին շրջանների երաժշտական խազերի նշանակութեան մասին մեր գրականութեան մէջ ոչ մի տեղեկութիւն չէք գտնի, ուստի և ապարդիւն և միանգամայն նոյն իսկ անմիտ փորձ կլինի մեր խազերի վերծանութիւնը շարականներով սկսելը, որովհետեւ՝ ինչպէս 1305-ից մինչև 1700 թուականը գրուած ութը ձեռազիր շարականների<sup>1)</sup> խազերի մեր կատարած համեմատութիւնը ցոյց է տալիս, մեր շարականը, միանգամ Խաչատուրի և նորա աշակերտների ձեռքով խազաւորուելուց յետոյ, այնուհետեւ ոչ Մի փոփոխութեան չի ենթարկուել. հետեւապէս և նորա մէջ գործ ածուած խազերը իրենց նշանակութեամբ 12, 13-րորդ դարերին են պատկանում և մեր խազաւոր գրականութեան ամենահին շրջանն են կազմում:

Խազերի վերջին շրջանի վերաբերմամբ այդպէս անյուսալի զրութեան մէջ չենք: Բացի այստեղ այնտեղ խազերի անուններից ու ցան յիշատակութիւններից զանազան ձեռագըրների մէջ՝ ինչպէս երուսաղէմի մի ձեռագրում ե. Տնտեսեանի գտածն է, ինչպէս և «Եիրուն զրօսարան»-ներում եղածն է, ունենք և մի ուրիշ անգնահատելի ազբիւր, դա հայկական պապագիկէն (Papadike) է «արտահանեցեալ ի կեսարացի Գապասաքալեան Պրիգոր գպրէ»:

Միջնադարում՝ մինչև վերջին ժամանակներն էլ յոյն երգիչները ունէին քերականութեան պէս մի գրուածք խազերի նշանակութեան և բացատրութեան համար. այս քերականութիւնն է, որ կոչւում է papadike: Գաբասաքալեանի այս

<sup>1)</sup> № 1573, 1586, 1572, 1600, 1581, 1609, 1604, և 1582 կարին ցց.

զրբի մասին «Հանդէս ամսօրեայում» յաճախ է գրուել. 1895-ի մարտ և ապրիլ Նեներում՝ Տ. Վ. Պ. զրբի մանրամասն նկարագիրն է տալիս, թւում է բոլոր զլիագիրները, տալիս է երբեմն և մանրամասնութիւններ. 1896-ի դեկտեմբեր համարում մի յարուցուած հարցի առիթով նորից այս զրբի մասին յօդուած ունի Տ. Վ. Պ. և ցոյց է տալիս, որ զրբի է Գարասաքալեանը՝ այս զրբի կրկնակի ապագրութիւնից յետոյ (1794-ին և 1803-ին) նոյնը աւելի ընդարձակ ծաւալով, որի «Ճակատն» է—Գիրք երաժշտութեան, յորում պարունակին հայերէն, յունարէն եւ պարսկերէն հարցմունք և պատասխանառութիւնք համառօտարար. Այս ընդարձակ վարիանաը անշուշտ նա պիտի աւարտած լինէր մինչև 1806 թուականը, քանի որ 1807-ի սկզբներին նա այլ ևս չկար, մեռել էր:

Մենք տեսել ենք այդ աշխատութեան ամենահին իհարկէ և ամենահամառօտ հրատարակութիւնը, որ եղել է 1794-ին. սկզբներում կարդալիս ոչինչ չէինք հասկանում, յունարէն տաճկերէն, պարսկերէն և հայերէն անշատ բառերի մի կուտակումն էր թւում, որոնց մէջ միտք փնտռելը վազուց արդէն անկարելի էինք համարում: Յետոյ միայն, երբ ծանօթացանք յունական պապագիկէների հետ, միտք ծագեց, թէ նմանութիւն չկայ այս զրբերի մէջ և դեռ զրբերը իրար զիմաց չզրած իսկոյն պատկերացան երկուսի մէջ էլ գտնուած ճախարակները, մոլորակները և այլն: Մի երկու ժամուայ համենատութիւնը ցոյց տուաւ, որ Գարասաքալեանի զիրքը հիմնուած է ամբողջովին յունական պապագիկէների վերայ, որ նա զլիաւոր օրէնքները տառացի թարգմանել է նոյնիսկ յունական տերմինները պահելով: Ահա թէ ինչու Գարասաքալեանի զիրքը մենք կոչում ենք հայկական պապագիկէ:

Սակայն ինչ էին այդ յունական պապագիկէները: <sup>1)</sup> Պապագիկէ անունը յունական է ոչ՛ոքա և ծնչել բառերի միացումն է և նշանակում է բառացի՝ խրատներ քահանաների համար: Այս պապագիկէները արտագրուել են մինչև 18-րորդ դարի վերջերը, թէև նկատելի է, որ վերջին դարերի արտագրուղները այլ ևս չեն հասկանում իրենց արտագրածը. իրօք այդ բացատրութիւնները այնքան համառօտ և կարճ են և շատ անզամ էլ հանելուկային, որ առանց ուսուցչի բերանացի բացատրութիւնների սովորական երգիչը ոչինչ չպիտի հասկանար: Այդպէս էլ լինում է, երբ ուսուցչի խօսքը կամ աւանդութեամբ եկածը աղաւաղըւում է, մոռացութեան է մատնում, այդ պապագիկէները չեն կարողանում երաժշտութեան տեսութեան անկման առաջն

<sup>1)</sup> Ամենահին պապագիկէն 15. դարու թղթէ ձեռագիր է, արտագր. Սան-Սալվադօր վանքում, վիրնագիրն է «Գրամմատիկէ մուղիկէ»:

առնել, այնպէս որ մի Դօմ-Գարբէջը, որ ամենայայտնի յոյն երգիչն էր համարւում և վիլլուոյի՛ուսուցիչը զեռ 1799-ին՝ սորա յոյն երաժշտութեան վերաբերմամբ կատարած ուսումնասիրութեան նկատմամբ, չէր հասկանում ամենկին պապադիկէի բացատրութիւնները և խաղերի նշանակութիւնը:

Պրօֆէսօր Թլայշէրը փորձում է հասկանալ և իր հետախուզութիւնների հիմք ծառայեցնել հէնց այդ պապադիկէնները, ինչքան էլ այդ բացատրութիւնները ժլատ և անհասկանալի լինէին: Ծատ օգնում են այդ բանին այդ խրատներից յետով որոշ մեթոդով զրուած վարժութիւնները սկսնակների համար. աւելի ուշ ժամանակներում զրուած պապադիկէններում կդանէք իրեւ շատ անհրաժեշտ և առաջին վարժութիւն կըկնակի խազաւորումներ նոյն ձայնների, որոնց համեմատութիւնը պարզ ձեերի խաղերի երաժշտական նշանակութիւն ունենալու մասին այլ ևս կասկածի ոչ մի տեղիք չի թողնում:

Սակայն թողնենք, որ յարգելի գիտնականը իւր հետախուզութիւնները կատարէ, վերջացնէ. իսկ մենք առ այժմ հայկական երաժշտական խաղերի մասին եղած կցկառը տեղեկութիւնները ի մի հաւաքելով ցոյց կտանք հայկական և յունական երաժշտական խաղերի առնչութիւնը մինչև մի պատճ առթիւ կըկարողանանք խաղերի վերծանութեան խնդրին վերապառնալ:

Ըստ պապադիկէնների 14 խազ կան, որոնք երգուում են. դրանցից ութը բարձրացող են. ինչպէս՝ օլիգօն, օրսէա, սլեթաստէ, կուֆիսմա, պելաստօն, դրուկնտիմատա, կենտեմա և հիպսիլէ. իսկ վեցը իջնող. ինչպէս՝ ապօստօֆ, դրուփինդէսմօս, ապօռո, կրատեմօ-յիւլոռո, էլաֆրօն, և իսամիլ:

Այս խաղերից ոմանք մարմնաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ: Ապօռոսն ոչ մարմին է և ոչ անմարմին:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Պայմանագիր 14 պատճեաւորեն, իսկ ոմանք անմարմին. բարձրացող առաջին վեց խաղերը և իջնող առաջին երկու խաղերը մարմնաւոր են. անմարմին են բարձրացող կենտեմա և հիպսիլէ և իջնող էլաֆրօն և իսամիլ:

Բոլորն ել մէկ մէկ աստիճան են ցոյց տալիս, բացի կենտեմայից, ապօռոյից և էլաֆրօնից, որոնք երկու, երկու աստիճան են ցոյց տալիս և բացի հիպսիլէից և խամիլից, որոնք չորս, չորս աստիճաններ են նշանակում:

Բացի այդ կան էլի մօտ 36 խազ, որոնք Մեծ խազեր են կը չուռամ. դրանք ձայնաստիճանն չեն ցոյց տալիս, այլ խէջրօնօմիական ուղղութիւններ են արտայայտում, սովորաբար կարմիր թանքքով են գրւում տարբերելու համար ձայնաստիճան ցոյց տալով եւկէջական խազերից, որոնք միշտ ու են գրւում:

Ison — Diplé Ηδωνή Parakletiké — Kratema Κράτη  
Kylisma κυριος Antikenokylyisma κυριος oder κυριος  
Tromikon Γραμμή Strepton Στρέπτων Τρομικοσyn-  
agma Γραμμή Περιφέρεια Περιφέρεια synag-  
ma Γραμμή Gorgon — Argon —  
Stauros — Antikenoma — Homalon Ημιόλων  
Thematismos εσο Θεματισμός εσο Εργε-  
ma Ημιόλων Parakalesma Καταστάση ή η ίδια η ίδια  
Xeron klasma Καταστάση ή η ίδια Argosyntheton Αργοσύνθετον Ημιόλων  
Γραμμή Gorgosyntheton Αργοσύνθετον Ημιόλων η ίδια η ίδια für den Pral-  
siker Ημιόλων ή η ίδια Uranisma Ουρανίσμα Ημιόλων η ίδια η ίδια  
Apoderma — Thes και apothes Ημιόλων η ίδια η ίδια  
Thema haplun Θέμα χαρακτήρα Χαρακτήρα η ίδια η ίδια η ίδια  
Psephiotoparakalesma Χαρακτήρα η ίδια η ίδια Tromikoparaka-  
lesma Στρέπτων η ίδια η ίδια (Hymnus in Eod Christi, wofür einstossen. Τρακισμός η ίδια η ίδια)  
Piasma Πιάσμα Λεισμα Λεισμα Lygisma Λιγισμα η ίδια η ίδια η ίδια  
Synamga Σύναγμα Enarxis Εναρξις Βαρια

Այս բոլոր տեղեկութիւնները յունական խազերի մասին բառացի տալիս է և Քաբասաքալեանը ու իսկոյն անցնում հայկական խազերին. «Տեսցուք, թէ որպիսի կերպիւ է ձեն մեր հայոց խազից: Որ ահա նախ իսօնն մեր, է այսու կերպիւ լոր ասի ասու. իբր թէ ասուն, որ է խօսուն. այս իբր ձայնահան և ոչ համանգամայն. զի որպէս խօնն յունաց՝ գոլով կէսն ալֆայի նոցա, որ վերին կտուցն քաջայայտ ցուցանէ, մերն ևս ելով կէսն այրի, որք իբր ամ անչեցեալ հանդարտօրէն ձայն արձակելով միշտ անդրադառնան. և ոչ կարեն լրապէս ալֆա կամ այր լինել և ձայն հանել իբրև զայլսն. այլ՝ որպէս նախկին գոլով գրոցն երկոցունց, հանապազ ի կիր արկման տեղի, ա, ե, է, ը և ո օ ու ասելով ձայնս արձակեն՝ երազին հանրից գրոցն ասութեանց զձայնս՝ որպէս յայտ իսկ է նկատողաց: Նաև թաշտն մեր, կարէ յարմարել իսօնի. սակայն զօրութիւն թաշտին ոչ է նման նմա, այլ այլազան կերպիւ: Այլ ևս խազըն հայոց թէութեան, է այսպէս ըստ զրիցն կարգի.

Կը թէր | . Առաջ ։ Առար ։ Բար) . հլարեց ։ խոչչու .  
Վլրինեալ ։ Կլրինեալ առ . վարժակ ։ խորութիւ .  
Ճաշչ ։ ճնչու ։ բեչչար ։ յնիր ։ Յ ։ իշար ։  
իռու ։ հռահայ ։ չիրաւ ։ զիր ։ չու ։  
ՀՀՀ ։ Կկրոյ ։ Բար ։ Երիմար ։ խոչչու .

Ըստ քերթողացն կիր արկման... սղից ու երկարից վանկից դնեն. բայց կիրառոց են մանաւանդ տաղաչափը ի շաբագրութիւնս երաժշտականս: Նմանապէս և կան ի միջի մերումս, Մեծամեծ խազիցն նշանը՝ զորս դնեմք ըստ վայելման տեղի ասութեանց. զոր օրինակ.

ինսպիրաց, իջիթվ՝ փող ։ շշառմահը ։  
դժեկիւնիրք և. իջնօթիւնիրք Ռ. իջորչյիւն ։  
իուրավորի ։ զինիում ։ թուց ։ շշառիւն ։  
դշերէչը ։ վլունիւն ։ նորնակիւն ա. դրյում.  
փշադարք ։ երիւլորայ առ. շիրք 2. էրդէ վ.  
իսկ ի. կիւրք կ. իւտի ի. զայրք զ. ըեւրէ ր:

Սոքա ըստ ձեզ ձայնիցն կարեն ի լրումն հասուցանել, զոր  
ինչ ձայնաւոր ասացուածք գտանի, որոց ոմանք երկուքն ի մի  
տեղ եղեալ և զերիմն կամ այլ աւելի և պակաս, երկարի և  
սղի երգն ասացուածոց միջնորդութեամբ երաժշտի. զի որպէս  
մինն առնէ և միւսն կըէ, և միւս երկի, որ ահա երաժիշտն  
առնէ...» (Գրա. 210—218 եր.).

Հէնց այստեղ պէտքէ նկատենք, որ հայկական խաղերը  
Գաբասաքալեանի համար շատ մուժն են. առաջին քայլից իսկ,  
երբ ուզում է մեր ասուն յունական իսօնի հետ համեմատել,  
ստիպուած է իւր տղիտութիւնը սխօլաստիկ բացատրութիւն-  
ներով քողարկելու. Գաբասաքալեանը, բացի իսօնը և ասուն,  
այնուհետեւ ոչ մի հայկական խազ չի համեմատում յունականի  
հետ, չի աշխատում նոյն յունական խաղերի բաժանումների և այդ  
բաժանումների պարունակած խաղերի քանակին յարմա-  
րեցնել հայկականը, կամ բացատրել չի փորձում, թէ ինչու մեզ  
մօտ շատ են խաղերը և այլն: Նոյն իսկ խաղերի աստիճանները  
որոշելիս, նա մեր մեծ կոչուած խաղերին էլ է որոշ աստիճան-  
ներ տալիս առանց նկատելու որ վերևը յունական մեծ խաղերին  
միայն խէյրօնօմիական նշանակութիւն տուաւ, կամ եթէ նկա-  
տում էլ է, չի բացատրում, թէ ինչու յունականը չունի իսկ  
հայկականը ունի:

Ահա այս նկատումները մեզ ստիպում են կասկածով կամ  
որոշ վերապահութեամբ վերաբերուելու նորա տուած տեղեկու-  
թիւններին հայկական խաղերի վերաբերմամբ ընդհանրապէս  
և խաղերի աստիճանների մասին, որ ստորե ցած ենք բերում,  
մասնաւորապէս:

Խազերի աստիճանները.

— — — wijk. 1. = 2. P2. 13. ° wijk.  
14. 14. 24. ~2. m4. ~4. m13. 1. 2.  
m1. x3. 81. ~1. ~8. 81. 81. 1. (17-  
huyf) d1. J2. R4. ~4. R3. ~8. ~3.  
~2. ~2. x3. m4. ~4. J9. 1. m29.  
L2. ~2. ~1. ~3. "1. ~wijk. — wijk.  
21. p1: (Pola-Pielenburg [van 287 John]):

Եթէ Գաբրիանաքալեանը զոնէ ձեւականօրէն մնծամիծ խաղբը միւսներից բաժանում է, Երուսաղէմի ձեռագիրը այդ էլ չէ անում. շարում է լոկ իրար ետևից իր իմացած բոլոր խաղբը: Բնին շաբաթաթ. 1867 թ. № 8.

Անուանք եղանակաց. ճայնից երգոց զիւտ իմաստնից

Մեր վերջին աղբիւրը, «Սիրուն զրօսարան»-ը գոնէ մի բաժանում ճանաչում է. «Թանի են հայոց խաղք, որով լինի եղանակը». —«Ինն և տասն. Ժ. վերելեակ և բարձր ձայնիւ, և ինն ստորիջեալք և ստոր ձայնիւ», և թւում է, նախ 10 վերելեակները՝

↑իրիկ . ւար . յիսր . թուրտի . միրնա  
իսու . օ նուշ . ա մշչ/ր . մ լէշյու . կ գիշյա.  
չ պարի : մկա իւշ սրորիչչ/րշ . միւշ . վ իրիկուշ.  
շ կարչի . ա խուշ . ա միրիչախուշ . մ իսարովայի.  
մ իսուշ . շ չափյու . ր բէյրէ՛ :

Համեմատելով այս երեք աղբիւրների տուած խաղերը միմեանց հետ, տեսնում ենք, որ նախ «Սիրուն զրօսարան»-ի տուած 19-ը խաղերն էլ իրենց ձևերով և իրենց անուններով ըստ ամենայնի նման գտնուում են և Գարասարալեանի նօտ, 15-ը խսկական ել և էջ ցոյց տւող խաղերին են համապատասխանում, իսկ չորսը՝ երկփուշ, պէկորճ, զակորճ և բէյրէք, մեծամեծ խաղերին. միւս կողմից էլ «Սիրուն զրօսարան»-ի տուած խաղերը համեմատութեամբ Գար.-ի քանակով շատ քիչ են. մեծամեծ խաղերից պակաս է 20 հատ, իսկ ելեէջ ցոյց տւող խաղերից մոտ 10 հատ. Ուրեմն «Սիրուն զրօսարանը» միւսների համեմատութեամբ պակասաւոր լինելով հանդերձ իրեւ առանձին և անկախ աղբիւր բարձրացող և իջնող խաղերի ստորաբաժանումն է իրեւ նորութիւն հանդէս բերում:

Գարասարալեանը տալիս է 48-ը խաղ, իսկ երուսաղէմի ձեռագիրը 54 խաղ:

Համեմատելով իրար հետ, տեսնում ենք, որ Երուսաղէմի ձեռագիր խաղերից միայն 15-ն են իրենց անուններով համապատասխանում Գարասարալեանի տուածներին. իսկ որ աւելի զարմանալին է, զրանցից էլ միայն չորսն են իրենց անուններով և մինչնոյն ժամանակ իրենց ծեսով բոլորովին համապատասխան Գարասարալեանի տուած խաղերին. այդ հազուագիւտ նման խաղերը սրանք են՝ շեշտ, էկորճ(ա), վերնախաղ և ներքնախաղ. մուցած 11 խաղերիցը՝ թուր և սուր զոյգ զոյգ կէտեր, իսկ զարկն

ու խոսրովայինը մէկ մէկ կէտեր են վերցրել, ըէկործ(ա) և դ(ծ)ակործ(ա) նոյն խաղը կրկնակի են վերցրել, թաշտն ու հ(ա)-տհայը աւելի բարդ խաղեր են դարձել, պահելով իրենց մէջ միենոյն ժամանակ սկզբնական ձեւը, փուշը շուռ է եկել, իսկ բարբաշն ու փաթութը բոլորովին փոխուել են և ոչ մի նմանութիւն չունեն Գարասաքալեանի տուածների հետ:

Իսկ եթէ համեմատենք խաղերի միայն ձեւը առանց ուշք դարձնելու անուններին, այն ժամանակ կանոնենք, որ 30 խաղ նոյն ձեն ունեն երկուսի մօտ էլ այսպէս Գարասաքալեանի ոլորակը նոյն ձեն ունի, ինչ որ երուսաղէմի ձեռագրի ծոցը, խունճը՝ խոնճը, վերնախաղը՝ վերնախաղը, ներքնախաղը՝ ներքնախաղը, խոսրովայինը՝ արաշեշտը, ծունկը՝ բերը, ծնկները՝ ողոմանեակը (քիչ փոփոխուած ձեւով՝ ծնկները), բենկորճը՝ բենկորճան (կրկնակի ձեռվ), ձակորճը՝ դակորճան (կրկնակի ձեռվ), էկորճը՝ էկորճան, հունայը՝ հոյունայը, փաթութը՝ քմատրոպը, զարկը՝ կուռը, փուշը՝ զարկը, շեշտը՝ շեշտը, պարոյկը՝ խունճը, բութը՝ գիրը, խոսրովայինան՝ խոսրովայինը, խոսրովատիօն՝ թուրը, թաշտը՝ թաշտը, շեշտաթաշտը՝ հանգոյցը, փշարենկորճը՝ զումը, վերնակէսը՝ զոն, ներքնակէսը՝ ծնկերը, մենկորճը՝ հարուկը, փշագարճը՝ փուշը, երկոլորակը՝ ծընկիկը (նաև բազմեղանակը կրկնակի ձեռվ):

Դիտող աշքը կարող է խսկոյն նկատել, որ գլխաւոր խաղերը իրենց ձեւերով երկու աղբիւրի մէջ էլ կան. նոյնաձե խաղերի անունների շփոթութիւնը և արբերութիւնը յիտագայ զարերում խաղերի գիտութեան մթնացման փայլուն ապացուներիցն է: Այդ աղաւազումների արդիւնքն է և այն հանգամանքը, որ Գարասաքալեանը խառնում է խաղերի հետ և վեց տաս, ինչպէս շակորճա (պէտքէ), պլակէկորճա), ի(իւեկ), զ(զակորճ), և ը(ըէյրէ), որոնք յունական երաժշտութեան մէջ գործածական լինելով հանգերձ խաղ չեն համարւում, խսկ երուսաղէմի ձեռագիրն էլ խառնում է պարզ խաղերի հետ խաղերի զանազան բարդ խմբակցութիւններ, որոնց թիւը նոյնիսկ 100-ների է հասնում գործնականի մէջ. այդ բարգերիցն են անշուշտ կրտվէ, միմևատր, վերքաշ, բարձրնաբեր, փաթութ, հայունայ, խաղ, բազմեղանակ, ծայնպարծ և այլն կոչուած խաղերը:

Եթէ հայ աղբիւրների տուած տեղեկութիւնները հայկական խաղերի մասին այգքան խառնաշփոթ են, աւելի ևս խառնափնթոր պատկեր կստացուի, եթէ հայկական խաղերը համեմատեհնք յունականի հետ, որոնք 13-րորդ դարուց սկսած բոլորովին անջատ ու տարբեր միջավայրերում են գործածութեան մէջ եղել.

սակայն նոյնիսկ այդ խառնաշփոթութեան մէջ էլ պարզ կերպով կարիի է տեսնել, որ Խաչատուր Տարօնեցու բերած երաժշտական խաղերը նոյնպէս յունական ծագումն ունեն և ներմուծուել են Յունաստանից կամ Փոքր-Ասիոյ յոյն գաղութներից՝ հակառակ Վենետիկցիների այն կարծիքին (տես «Բազմավէպ» 1900թ.), թէ մեր խաղերը լատինականից են սերուած։ Եւ այդ հետեւալ փաստերի հիման վերայ. նախ և առաջ Խաչատուր Տարօնեցու բերած երաժտական խաղերի գլխաւոր տարրը առողջանութեան նշաններն են կազմում. շեշտը, բութը, պարոյկը, երկարը, սուղը, թաւը, լերկը, ապաթարցը, ենթամնան և ստորատը իրենց ձևերով, թիչ բացառութեամբ նաև անուններով իրենց գոյութիւնը պահել են այս սիստեմի մէջ, իսկ յայտնի է (Ա. զլուխ), որ մեր առողջանութեան նշանները վերցրել ենք յոյներից։ Երկրորդ՝ համարեա խաղ չկայ յունական պապադիկէններում, որի ձեզ չունենայինք մեր վերցյշեալ հայկական աղքիւրների կամ խաղաւորուած շարականների մէջ։ Եւ երրորդ՝ հէնց այդ խառնաշփոթ դրութեամբ էլ կարելի է յունական և հայկական (ըստ Գաբրասաքալեանի վարեանտի) խաղերից մօտ 14 խաղ մատնանշել, որոնք նոյն անունն (հայերէնում ի հարկէ թարգմանուած) և թիչ բացառութեամբ նաև նոյն ձեն ունեն երկուսի մէջ էլ։ Այսպէս բարձրացող խաղերից օլիգոնը թարգմանուած է տուղ, ձեռվ տարրեր են, օրսէնան՝ սուր, նոյն ձեն ունեն, պեթաստէն՝ թաշտ, նոյն ձեն ունեն, դիտոկէնտէման՝ երկփուշ, ձեռվ նման է երկրութին, Կէնտէման՝ փուշ, ձեռվ նման է բութին. իջնող խաղերից ապօստրոֆօսը՝ թարգմանուած է ծունկ, նոյն ձեն ունեն, դիտուն-դէմոյ-ը՝ ելլէտոնկ, նոյն ձեն ունեն, ապօռոէ-ն՝ խոնճ, նոյն ձեն ունեն, էլաֆրոնը՝ պարոյկ, նոյն ձեն ունեն. մեծ խաղերից իսօնը թարգմանուած է ըստ Գաբրասաքալեանի ասու, նոյն ձեն ունեն, կրատեման՝ զարկ, նոյն ձեն ունեն, պուէֆիստոն-ը՝ թուր, նոյն ձեն ունեն, բարէյա-ն՝ բութ, նոյն ձեն ունեն, և կիլիսմա-ն՝ փաթութ նոյն ձեն ունեն\*.

\* Համեմատել 28. և 29. երեսների կլիշէների յունական խաղերը 30. և 31. երեսների կլիշէների հայկական խաղերի հետ-

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԹԸ ԶԱՅՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ութը ձայների կազմութեան, նոցա իրար վերաբերմամբ  
ունեցած յարաբերութեան մասին ոչ մի յիշատակութիւն չկայ  
մեր ամբողջ գրականութեան մէջ։ Այստեղ, այնտեղ ճիշտ է,  
կդանեք ինչ ինչ տեղեկութիւններ, բայց սոքա բոլորն եւ սխօ-  
լաստիկ, մուժը և խնդիրը ոչ մի կերպ չպարզաբանող մեկնու-  
թիւններ են։ Օր, եւսերիսի եկեղեցական պատմութեան մէջ  
պահուած՝ «յզգս ձայնից թէ ուստի գտան» հատուածը, «Երանե-  
լոյն Բարսեղի յզգս ձայնից թէ ուստի իցեն և կամ յումմէ գտան,  
զոր թարգմանեաց Ստեփաննոս գիլիսովիայ՝ զի նա եղեւ երաժիշտ  
և հմուտ ձայնից ամենայն կենդանեաց և բաժանեաց զձայնս  
ի մասունս իդ, որ են այսոքիկ։ Բառաչել, բչել, կռնչել, զոչել  
բնչել, մնչել, բբչել, կառանչել, մոմուել, ճչել, կանչել, զոհզոհել,  
վչել, խանչել, հառաչել, առանցել, կաղկնձել, հաջել, կանկանջել,  
զոկել, որէ կարկաջել, սողալ, սրովին գալ, մնջնջել, ճոճուել.  
և սա առնոյ ի ծայնից և զրծէ զուգամթիւս առ ամենայն ծայն,  
որ մի առ մի երգին սոքօք ծոյլի արարեալ» (263 եւս. եկ. պտ.)։  
Կամ № 94 և 103 (Գգ. ցց.) ձեռագրներում պահուած «ձայնից  
գիւտք ըստ գիլիսովիայիցն» հատուածը. «Ա) ի հիւանականէն  
Բ) ի գարբնականէն, Գ) ի գետոց, Դ) լաղօրեաց, Ե) ի յերկաթոյ,  
Զ) ի ծփանաց ծովու, Է) ի ծովային կենդանեաց, Ը) յանասնոց,  
Թ) ի հաւուց։ Բարսեղի և այլոց յզգս ձայնից զոր գտեալ է  
Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զի նա եղեւ երաժիշտ  
ամենայն ձայնից, և բաժանեաց զօայնն ի մասունս և եղ  
զյարակայ ծայնիցն, զոր կարգեցին որ. նարքն. Առաջին ծայն.  
փառք ի բարձուս և օրհնեալ տէր բնակիալ. և վասըն ի վերուսա-  
չուածին կողմ։ աւրի, կանոնաց, առաքեացն և մերձենալ յե-  
րեկոյին, Աստուած մեծ. և օգնեա մեղ Տէրն. եկեղեցւոյ. և  
երկրորդ կողմն սահզն ողջոյն քահանայից, և լուսաւորեացն.  
և կիսաձայն ըստ ողողիք. երեք սաղմոսացն. և այս է խորհուրդն

Ա.Ձ.ՀՆ նմանութիւն փողոյն, և փութապէս ելանել ընդառաջ Տեառն Երկրորդն ասէ, արիք ընդ առաջ Տեառն ահա զայ Քս.: Երրորդ ձայնն ասէ հանդիպել ամենայն ոգւոց Ա.Յ. ... միբերան. մեղաք քեկ որպէս մարդ, ողորմեաց մեզ թ զԱստուած: Չորրորդ ձայնն ասէ ատեան դատաստանին յորդրի և զպրիւք բանին: Ա.Կ լալումն և ողբումն և աշխարումն որք ոչ գծցին զօրէնս: ԲԿ. հուր գեհենին զօրանայ որպէս զառիւծ կլանէ զմեղաւորս: ԳԿ հրդեհել երկնի և երկրի: ԴԿ հատեալ վճիռ դատաստանին...» (86 Եր. 94 Ն Պդ. ցց.):

Սակայն յունական պապադիկէների տուած տեղեկութիւնների շնորհիւ, որի մի մասը մեր Գարասաքալեանի մէջ ևս պահուած է, այդ գաղտնիքը լուծում է: Ութը ձայների վարդապետութիւնը, որ Մեսսինայի պապադիկէի մէջ պակասում է, մի ուրիշ՝ Քրիստոնդութիւնը կոչուած, մագաղաթեայ ձեռագրի միջոցն է մեր ձեռքը հասել, որը բառացի դնում ենք այստեղ հայերէն թարգմանութեան հետ, Գարասաքալեանի համեմատութեամբ:

Քրիստոների ձեռագիր

«Εγχουσι δὲ καὶ ὀνομασίας οἱ ἦγετοι αὐτῶν·

οἱ πρῶτος λέγεται ἄνανες, γράφεται δὲ καὶ ἐν τοιότοις σημείοις α.

οἱ δεύτερος λέγεται νεανές καὶ γράφεται οὕτως β.

οἱ τρίτος λέγεται νανάς καὶ γράφεται οὕτως γ.

οἱ τέταρτος λέγεται ἄγια καὶ γράφεται οὕτως δ.

Հայերեն բարգ.

Զայները հետեւեալ անուններն ունեն: <sup>1)</sup>

Առաջինը կոչւում է անանէս և գրւում է հետեւեալ նշանով ա: <sup>2)</sup>)

Երկրորդը կոչւում է նէանէս և գրւում է այսպէս թ: <sup>3)</sup>)

Երրորդը կոչւում է նանա և գրւում է այսպէս γ: <sup>4)</sup>)

Չորրորդը կոչւում է հազիս և գրւում է այսպէս δ: <sup>5)</sup>)

### Գարասաքալեան

1) Ուրեմն ըստ զրութեանցն կարգի է այսպէս.

2) Բրόգոս—ա ն ա ն է

3) Դէվդէրօս—ն է ա ն է ա

4) Դրիգոս—ն ա ն ա.

5) Դեղարդօս—ա յ ի ա.

ο πλάγιος τοῦ πρώτου ἀνέανες  
καὶ γράφεται οὕτως πλ. α.

ο πλάγιος τοῦ δευτέρου νεέανες  
καὶ γράφεται οὕτως πλ. β.

ο πλάγιος τοῦ τρίτου, δε καὶ βαρύς,  
λέγεται ἀσνὲς καὶ γράφεται οὕτως βαρ.

ο δὲ τοῦ τετάρτου πλάγιος λέγεται  
νεάγις, γράφεται δέ οὕτως πλ. δ.

"Εχουσι δε καὶ οἱ ἡγοι ὄνόματα  
καὶ εἰσιν ταῦτα ὁ πρῶτος λέγεται δώ-  
ριος, ὁ β λέγεται λόδιος, ὁ γ λέγεται  
φρύγιος, ὁ δ λέγεται μεσολόδιος· ὁ  
πλάγιος α λέγεται ὑποδώριος, ὁ πλ. β  
λέγεται ὑπολόδιος, ὁ βαρύς λέγεται  
ὑποφρύγιος, ὁ πλ. δ λέγεται ὑπομεσο-  
λόδιος.

"Εγειτ δε ὁ πρῶτος ἡγος μέσον τὸν γ,  
ο δεύτερος τὸν πλ. δ, ο τρίτος τὸν πλ.  
α, ο τέταρτος τὸν πλ. β, ο πλάγιος τοῦ  
πρώτου τὸν γ, ο πλάγιος τοῦ δευτέρου  
τὸν δ, ο βαρύς τὸν α, ο πλάγιος τοῦ  
τετάρτου τὸν β.

Առաջինի կողմը կոչւում  
է անէանէս և գրւում է այս-  
պէս՝ πλ. α: <sup>6)</sup>

Երկրորդի կողմը կոչւում  
է նէանէս և գրւում այս-  
պէս՝ πλ. β: <sup>7)</sup>

Երրորդի կողմը, որը նաև  
բարիւս է անուանւում, կոչ-  
ւում է աանէս և գրւում է  
այսպէս՝ βαր: <sup>8)</sup>

Իսկ չորրորդի կողմը կոչ-  
ւում է նէազիէ և գրր-  
ւում է այսպէս՝ πλ. δ: <sup>9)</sup>

Այս ձայները ունեն ա-  
նուններ. առաջինը կոչւում  
է դորիական, երկրորդը՝  
միլիական, երրորդը՝ միլի-  
պիական, չորրորդը՝ միլիո-  
լիլիական. Առաջին կողմը  
կոչւում է հիպօլօρիական,  
երկրորդ կողմը՝ հիպօլի-  
փիական, բարիւսը (ցածը)  
կոչւում է հիպօլիփիակա-  
կան և չորրորդ կողմը՝ հի-  
պօլիքսոլիփիական:

Առաջին ձայնը իրեւ մի-  
ջին ձայն (με' σον) ունի γ (եր-  
րորդը)\*. Երկրորդը՝ πλ. δ (չոր-  
րորդ կողմը), երրորդը՝ πλ. α (առաջին կողմը), չորրոր-  
դը՝ πλ. β (երկրորդ կողմը).  
առաջինի կողմը՝ γ (եր-  
րորդ ձայնը), երկրորդի  
կողմը՝ δ (չորրորդ ձայնը),  
բարիւսը՝ α (առաջին ձայնը),

<sup>6)</sup> Βιλιοս դուρρօդու — անէանէս

<sup>7)</sup> Βιλιοս դու գէֆդէրու — նէանէս

<sup>8)</sup> Վառիս — անէանէս

<sup>9)</sup> Βιլιոս դու գէտարդու — նէանէիէ: (Գր. 194 եր.)

\* Յունական վարիանաը սխալ է, պէտք է լինի երրորդ  
կողմ ինչպէս որ Գարասաքալեանինն է: Սա բարիւսը թարգմա-  
դում է ծանր բառով:

ξυρρορηφι կողմը՝ Յ (երկրորդ  
ձայնը).<sup>10)</sup>

Ερμηνεία τῆς κατάτης παραλλαγῆς  
ωφελιμωτάτη διὰ τούς ζημαθεῖς καὶ  
ἀπλουστερά.

Ἐὰν καταβῆται ἀπὸ τοῦ αὐτῶν φωνῆς,  
εὐρήσῃς πλ. δ., καὶ ἔαν καταβῆται  
ἀπὸ τοῦ πλ. δ μίαν φωνὴν εὐρήσῃς  
γ. μίαν φωνὴν εὐρήσῃς πλ. β., καὶ  
ἀπὸ τοῦ πλ. β μίαν φωνὴν εὐρήσῃς  
γ. μίαν φωνὴν εὐρήσῃς πλ. α., καὶ  
ἀπὸ τοῦ πλ. α. ὅτι εἴναι ἀναβῆται  
ἀπὸ τοῦ β μίαν φωνὴν εὐρήσῃς  
εἴτε εὐρήσῃς ἕτερην εὐρήσῃς πλ. α.  
Ομοίως καταβῆται μίαν φωνὴν εὐρήσῃς πλ. δ.

Զայների փոփոխութեանց  
բացատրութիւնը շատ օգ-  
տակար է չիմացողների հա-  
մար և շատ պարզ է:

Եթէ առաջին ձայնից մի  
աստիճան ցած իջնես, կը-  
գանես πλ. Յ (չորրորդ կողմը).  
Հորորդ կողմից մի աստիճան  
ցած կգտնես γ (երրորդը)\*,  
մի աստիճան ցած Պ.Յ (եր-  
կրորդ կողմը), և երկրորդ  
կողմից մի աստիճան էլ  
ցած Պ.Ա. իսկ Եթէ մի աս-  
տիճան երկրորդ ձայնից  
վեր բարձրանաս, կգտնես γ  
(երրորդ ձայնը) և մի աս-  
տիճան էլ՝ Յ (չորրորդ ձայ-  
նը). իսկ սորանից մի աս-  
տիճան բարձր էլի ռ-ն (ա-  
ռաջին ձայնը) կգտնես, սո-  
րանից էլ մի աստիճան  
Եթէ ցած իջնես, կգտնես  
չորրորդ կողմը՝ Պ.Յ.

Γնωσκε ծὲ καὶ τοῦτο ծὲ ἀπὸ τοῦ  
Դ/Խ/Օ, οἰος ձեռα և Ձ/Ղ/Օ, էան καταβῆται  
μίαν φωνὴν γίνεται ἐναλλαγὴ τοῦ Դ/Խ/Օ.  
Εἰ ծὲ πάλιν ἀναβῆται μίαν φωνὴν ἀπὸ  
ἐκεῖ, ὅποῦ ἐκράγης πάλιν τον անτու  
Դ/Խ/Օ. Ούτως չշօνσιν σί ծուտ Դ/Խ/Օ.

Իմացիր և այն, որ Եթէ  
մի որեէ ձայնից մի աստի-  
ճան ցած իջնես, ձայնի փո-  
փոխութիւն կյառաջանայ,  
և Եթէ մի աստիճան այդ  
իջած ձայնից, որով երգում  
էիր, նորից վեր բարձրա-  
նաս, կգտնես էլի առաջուայ  
ձայնը: Այսպէս են իրար  
յարաբերում ութ ձայնն էլ:

Καὶ τաῦτα, ծὲ (էան) καταβῆται ἀπὸ-  
τοῦ α φωνէ: Ե, εὐρήσῃς πλ. δ, εὶ  
ծὲ ε εὐρήσῃς βαրὺն εἰ ծὲ ἐπτά, εὐρή-  
σῃς πλ. β, δὲ ἀπὸ κτύπου διὰ τὴν էπτա-  
φωνίαν էστι օ անτօս ա, առմօս օքան

Այս ևս գիտցիր, որ Եթէ  
առաջին ձայնից հինգ աս-  
տիճան (վեցեակ) իջնես, կը  
գտնես πλ. Յ (չորրորդ կող-  
մը), Եթէ վեց (եօթնեակ)  
կըգտնես բարիւսը. իսկ ե-

<sup>10)</sup> Այլև առաջնոյ ձայնի մէջն ծանրը ձայն է, երկրորդի  
մէջն չորրորդի կողմն ձայն է և՛ ըստ կարգի (211 եր. Գրս.):  
\* Պիտի լինի երրորդ կողմը:

ծուշմնա, օ՛տաշ ո՞ն էտի, է՛կ չարջիշ  
և ալ ՛աւ տան էկատան (sic) և է՛կ է՛կ  
ձարջիշ ուժաւ ձլլաւ տօսաւ.

թէ եօթ (ութեակ)՝ կզտնես  
երկրորդ կողմը, որը նոյ-  
նահնչիւն է եօթ աստի-  
ճան (օկտաւա) հեռու լի-  
նելու պատճառով նոյն ա-  
ռաջին ձայնի հետ. Այսպէս  
կլինի եթէ նոյն իսկ 100  
ձայն ցած իջնես և էլի  
կրկին բարձրանաս:

Այս կարճառօտ բացատրութիւնից երեսում է, որ ութը  
ձայն կայ, որոնցից չորսը 1—4 թիւ ցոյց տուող տառերով՝  
չ, թ, ց, ծ-ով են արտայայտում գրութեան ժամանակ և որոնք  
յետագայում դշու չօքու՞ իշխող ձայներ են կոչւում. իսկ միւս  
չորսը կոչւում են ուժա՞րու և արտայայտում են գրութեան ժա-  
մանակ էլի նոյն տառերով միայն սկզբից ուժա՞րու բառիկրճա-  
տումը՝ ուժ. դնելով, բացի երրորդից, որի համար Յաջն անունն  
է գործածում:

Ապա յայտնի է լինում, որ այս ձայները բացի թւող՝ ա-  
ռաջին, երկրորդ և այլն անուններից, ունեն և ուրիշ անուններ՝  
դորիական, լիդիական, փոփլիական և այլն, որոնք ոչ այլ ինչ  
են, եթէ ոչ հին յունական օկտաւաների անունները նոյն հեր-  
թական կարգով վերցրած՝ միայն այն փոփոխութեամբ, որ լի-  
դիականն ու փոփլիականը, ինչպէս և հիւալոլդիականը և հիւ-  
ալոփոփլիականը փոխադաբար իրար տեղ են բռնել, մի փո-  
փոխութիւն, որը կարծել է տալիս, թէ այդ անունները հէնց  
սկզբից չեն վերցրուած հինյունականից, այլ յետագայ զարերում,  
երբ հին յունական օկտաւաների յիշողութիւնը մթնացել էր արդէն:

Ցետոյ պարզում է ութը ձայների իրար հետ ունեցած յա-  
րաբերութիւնը, որ առաջին ձայնից աստիճանաբար իջնելով  
կպատահներ չորրորդ, երրորդ, երկրորդ և առաջին կողմերին,  
իսկ գէպի վեր բարձրանալով՝ երկրորդ, երրորդ և չորրորդ ձայ-  
ներին և որ այդ օրէնքը նոյնն է մնում ինչքան էլ բարձրանանք  
և ցածրանանք. այսինքն բարձրանալիս՝ 1, 2, 3, 4. 1 2, 3, 4.  
1, 2, 3, 4. 1, 2, 3, 4 և այլն, ձայներ. իջնելիս՝ 4, 3, 2, 1.  
4, 3, 2, 1. 4, 3, 2, 1. 4, 3, 2, 1 և այլն, կողմեր:

Ինչպէս երեսում է այս մեզ համար այնքան պարզ օրէն-  
քին շատ մեծ նշանակութիւն էին տալիս հնում. կարելի է յա-  
ճախ այդ օրէնքը ծառի պատկերով ներկայացրած տեսնել, որի  
թեք ձգւող ճիւղերի մէջ եկեղեցական ձայներ ցոյց տևող նշաններն

ու տառերն էին գրում, կամ անիւի ձևով, որի շառաւիդներն էին կազմում այդ նոյն տառերն ու նշանները, կամ շրջանի ձևով են.:

Ապա, քանի որ ութը ձայները, α, β, γ, δ և πλ.α, πλ.β, Յաρու և πλ.δ թւող այբբենական տառերով են նշանակում, այդպիսով այդ նոյն տառերին մի տեսակ այբբենական նօտագրութեան նշանակութիւն է տրում, որոնց միջոցով խազերի անորոշութիւնը՝ բացարձակ ձայնաստիճանի նկատմամբ, վերանում է մէջտեղից: Այսպէս շն առաջին ձայնի հիմնաձայնն է ցոյց տալիս, Յ-ն՝ երկրորդինը, γ-ն՝ երրորդինը և այլն, այն էլ իրը ձայնը բարձրացող ընթացք ունի, և πλ.α, πλ.β, և այլն, իջնող, ցածացող շարժողութիւնների ժամանակ. ուրեմն միևնոյն ձայնը իրու բարձրացող նկատուած, միայն սոսկ այբբենով է արայայտում և իրու իջնող՝ էլի նոյն տառով, միայն առաջից աւելացրած πλ. կրճատումով:

Ինչքան էլ այդ գրութեան ձևը որոշ անյարմարութիւններ ներկայացնէ, այնուամենայնիւ խազերի վերծանութեան համար մեծ նշանակութիւն ունի: Այդ սկզբնատառերը ճիշտ նոյն նշանակութիւնն ունեն խազերի վերծանութեան համար, ինչ բանալին ներկայ գծային սիստեմի մէջ. զորանով կարելի է հրաշալի կերպով խազերի վերծանութիւնը կոնտրօլի ենթարկել և հաստատուն կերպով առաջ գնալ, որովհետեւ այդ տառերը, որոնք յետագայում Մշրուֆաւ-վկաններ կոչումն են ստանում, միայն վարժութիւնների մէջ չեն գրում, այլ զործնական երաժշտութեան մէջ խազաւորուած իւրաքարչիւր կտորի սկզբին՝ սկսելու ձայնը տալու համար, շատ անգամ նաև տան կիսին, երբեմն նաև տան իւրաքանչիւր մասի վերջին՝ ձայնը, եղանակը չկորցնելու համար:

Պապագիկէները բարձրացող ու ցածրացող ձայների մասին խօսելիս ոչ մի տարրերութիւն չեն դնում ամբողջ և կէս ձայնամիջոցների մասին. իմանայինք կէս միջոցը չ-ի և Յ-ի, կամ Յ-ի և Յ-ի, մէջն է գտնուում, այն ժամանակ կարող էինք ասել, թէ մեր ներկայ գծային սիստեմի որ ձայներին են համապատասխանում այդ բանալի տառերը: Սակայն այնքան էլ զժուար չէ դոցա ձայնական նշանակութիւնը գտնելը, եթէ համեմատութեան մէջ գնենք միջնադարեան յունական՝ բիւզանդական երաժշտութիւնը կաթոլիկ երաժշտութեան հետ:

Աւտէնատիկ և պլազալ Դյուների ուսմունքը յոյներից է անցել կաթոլիկ եկեղեցուն. ինչքան էլ կաթոլիկ եկեղեցու աւանդութիւնը այդ ձայներիներմուծումը Ամբրոսիոսին և Գրիգոր Լին

վերակրէ, այնուամենայնիւ փաստ է, որ միայն ութերորդ գարումն է առաջին անգամ աւտէնտիկ և պլագալ ձայների մասին խօսք լինում. առաջին անգամ այդ ժաման յիշում է վերոյիշեալ դարում Ալկուինը իւր երաժշտութեան մասին թողած մի հատակոտորի մէջ, ուր նա ասում է, որ կայ ութը ձայն, որոնք չորս-չորս autentici և plagii են բաժանում. առաջինը կոչում է protus, երկրորդը՝ deuterus, երրորդը՝ tritus և չորրորդը՝ tetrarchius. Այս անունների յունական լինելը, որ նոյնիսկ Ալկուինին է յայտնի, մի մեծ ապացոյց է, որ ութ ձայնների ուսմունքը յոյներից է անցել արևմուտք: Ամենայն հաւանականութեամբ հէնց Ալկուինի ժամանակ էլ քանի որ կասսիօդօրը նոյնիսկ, որից նա օգտում է, ոչ մի յիշատակութիւն չունի, այս ուսմունքը մտել է կաթոլիկ եկեղեցու մէջ յոյն երգիչների ձեռքով, որոնք կարլ մեծի պալատում շատ մեծ համակրանք և պատիւ էին վայելում: Այս բանին փաստ կարող է ծառայել նաև Աւրելիանոս Թէօմէնզիսի պատմուածքը «Musica disciplina»-ի մէջ ութը ձայնների մասին, ուր խօսում է ի միջի այլոց, թէ Կարլոս Մ'եծը լատինների փառքը յոյներին հաւասարեցնելու համար, հրամայեց չորս ձայն ևս աւելացնել: Որ այս չորս ձայնը էլի յոյներից էին վերցնում, ինչպէս և առաջին չորսը, այդ հէնց Աւրելիանոսի բացատրութիւններից և յունական միւս կոչումների ananes, neanes, nana ևն. անհասկունալի բառերի այստեղ քիչ չափով, բայց ոչքիշ պատմագիրների մէջ աւելի մեծ չափով խեղաթիւրուած յիշատակութիւններից էլ է բոլորովին պարզ:

Հետեւեալ ութ կէտերի մէջ կարելի է այդ երկուսի նմանութիւնը սմիգովիել.

1) Բիւզանգացիք կոչում են իրենց գամմաները ԴՇՕ<sup>1</sup> ձայններ. նոյնպէս և լատինները կոչում են «toni» ձայններ. առաջինների մօտ այդ ԴՇՕ կոչումը պատմականօրէն բացատրում է, որովհետեւ նոցա ԴՇՕ-ները սկզբնապէս իրօք հատ հատ ձայններ էին, որոնց թւող ա, թ, ց, ծ տառերը նոյնպէս այս հատ հատ ձայնների վերայ կառուցւող գամմաների թուահամարը կարող էին ցոյց տալ. իսկ լատինների մօտ, որոնց ա, թ, ց, ծ միենոյն ժամանակ իրրեւ թիւ գործածւում, այդ տօն անունը ամբողջ եկեղեցական գամմաների համար օտար է և դրսից՝ իմայ յոյներից, եկած:

2) Բիւզանդացիք ունէին «ութը ձայներ». լատինները աւանդութեան համաձայն վերցրին բիւզանդացոց երգիչներից նոյնպէս «ութը ձայներ»:

3) Լատինները վերցրին բիւզանդացիներից իւրաքանչիւր վկան-ին յատուկ ձայնական պտոյաները (Echemata) յունական Tropi կոչման հետ միասին, և նոցա առանձնայատուկ հեղելու, վանկելու (sullabirung) ձևը:

4) Ութը ձայների չորս-չորս՝ երկու խմբի բաժանումը նոյնպէս ընդհանուր է թէ բիւզանդացոց և թէ լատինացոց մօտ. իսկ այդ խմբերի կոչումը՝ autentici և plagii յոյներից է վերցրուած:

5) Այդ չորս-չորս ձայների ցածից հաշուելու ձեն էլ ընդհանուր է թէ յոյների և թէ լատինների մէջ. լատինների մօտ նոյնիսկ յունական դասական թուականներն են գործածւում՝ protus, deuterus և այլն:

6) Երկուսի մօտ էլ հին յունական գամմաների անուները՝ դօրիական, լիդիական և այլն, գործ են ածւում եկեղեցական «ձայների» համար:

7) Լատինական «ձայները» (toni) նոյնպէս, ինչպէս բիւզանդականը, բացարձակապէս դիատօնիկ կազմութիւն ունեն, սրոնց արտայայտութեան համար յոյները իրենց առաջին չորս տառերի (բվինտային) յաճախակի կրկնութիւնն են գործ ածւում, իսկ լատինները իրենց առաջին եօթը տառերի (օկտաւի) կրկնութիւնը:

8) Այս այր-բենական նօտաների զրութեան ձեզ երկուսի մօտ էլ աւելի տեսական նշանակութիւն ունի. գործնականի մէջ երկուսն էլ խազերով են առաջնորդուում:

Այս բոլորից երեսում է, որ արեմտեան՝ լատինական եկեղեցու «ձայներ»-ը բիւզանդականի մի անդրադարձումն է հայելու մէջ և այդ պատճառով էլ կարելի է ապահով կերպով պնդել, որ ուրեմն նոցա ձայնամիջոցային յարաբերութիւններն էլ պիտի իրար համաձայնեն: Միենոյն ժամանակ երկուսն էլ հին յունական գամմաներից են բղխում, որոնք դիատօնիկ Ա—ա գամմայի սահմաններումն են զարգանում: Այսպիսով թէ հին յունական,

թէ բիւզանդական և թէ լատինական այրքենական հօտաների գրութեան սիստեմները սկսում են Ա-ից, իսկ վերջինների (լատինների) ձ-ն ճիշտ նոյն տեղն ու դիրքն ունի, ինչ մեր ներկայ գծային սիստեմի մէջ մեր գործածած ձ-ն, ուրեմն եթէ բիւզանդական շ-ն հաւասար է լատինական ձ-ին, իսկ լատինական Ձ-ն արդէն մեր գծայինի Ձ-ն է, բիւզանդական Ձ-ն մեր ներկայ գծային սիստեմի Ձ-ի բարձրութիւնը պիտի ունենայ:

Սյժմ այս ՚յշօ՛ չ=Ձ-ից հաշում են պապատիկէները աստիճանաբար դէպի վեր և դէպի վար, չ, Յ, Շ, Ծ հնդեակի շրջանով. հին յունական գամմայի համեմատութեամբ Ձ-ից դէպի վեր Յ-ն հաւասար կըլինի Յ(h)-ին, Շ-ն=Ը-ին, Ծ-ն Ը-ին, իսկ Ձ-ից աստիճանաբար ցած՝ Յ-ն հաւասար կըլինի Ց-ին, Շ-ն՝ Ւ-ին, Յ-ն՝ Ե-ին և Ձ-ն՝ Ը-ին. Եւ կստացուի այս ձայնաշարը.

Թէ	Մի	Ջա	Աօյլ	լիա	Աի	Էօ	Աէ
Ձ	Յ	Շ	Ծ	Յ	Չ	Յ	Ծ
՚յշօ՛ ռկաշչօ՛						՚յշօ՛ Շ Յ Ծ	

Դիտենք սորա, իբրև երաժշտութեան պատմութեան համար երեան եկած մի նոր սիստեմի, յարաքերութիւնը հին յունական և լատինական սիստեմների հետ Յայնի է, որ Սի Ճայնը (հօտան) թէ հնում և թէ միջնադարում կրկնակի նշանակութիւն ունէր. երբեմն կարելի էր պահանջը ստիպած տեղը, իբրև Յ (շաղկաբանաց), երբեմն էլ իբրև Լ (ծագաւշաղկանաց) գործածել պէտք է նկատել որ այս Ճայնի կրկնակի նշանակութիւն ունենալը նախադունն է կազմել յետագայ դարերում խրօմատիզմի յաղթական յառաջսադացութեան համար:

Սյժմ ընդունենք Յ-ն=Յ-ի և համեմատենք ՚յշօ՛-ների վերայ կազմուած գամմանները իբրև անունների հետ միասին հին յունականի հետ, և ինչ զարմանալի զուգաղիպութիւն:

n	$\lambda$	$\alpha$	$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	$d \ e^{\frown} f \ g \ a^{\frown} b \ c \ d = I \ 1^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1 \ I$	$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	A-a
"	$\beta$		$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	$e^{\frown} f \ g \ a^{\frown} b \ c \ d \ e = I^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1 \ I$	$U\bar{h}\varrho u\varrho\bar{h}\varrho u\varrho$	H-h
"	$\gamma$		$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	$f \ g \ a^{\frown} b \ c \ d \ e^{\frown} f = I \ I^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1$	$I\bar{h}\eta\bar{h}\varrho u\varrho u\bar{h}$	C-c
n	$\delta$		$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	$g \ a^{\frown} b \ c \ d \ e^{\frown} f \ g = I^{1/2} \ I \ I^{1/2} \ I \ 1$	$\Phi\eta\bar{h}\varrho\bar{h}\varrho u\varrho u\bar{h}$	D-d
"	$\gamma_L$	$\alpha$	$\eta_{\varrho\varrho\varrho\varrho\varrho\varrho\varrho\varrho}$	$a^{\frown} b \ c \ d \ e^{\frown} f \ g \ a = I^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1 \ I$	$\eta_{\varrho\varrho\varrho\varrho\varrho\varrho\varrho}$	E-e
n	$\beta$		$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	$b \ e \ d \ e^{\frown} f \ g \ a^{\frown} b = I \ I^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1$	$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	F-f
"	$\gamma$		$\Phi\eta\bar{h}\varrho\bar{h}\varrho\varrho\varrho$	$c \ d \ e^{\frown} f \ g \ a^{\frown} b \ c = I \ I^{1/2} \ I \ 1^{1/2} \ I \ 1$	$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	G-g
n	$\delta$		$U\bar{h}\varrho u\varrho\bar{h}\varrho = \bar{\eta}\bar{\eta}\mu\eta\varrho\varrho\varrho$	$d \ e^{\frown} f \ g \ a^{\frown} b \ c \ d = I^{1/2} \ I \ I^{1/2} \ I \ 1 \ I$	$\zeta_{\mu\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho\eta\varrho}$	A-a

Դիօրիականը և հիւպօգօրիականը, որոնք առանձնակի նշանակութիւն ունեն այդ երկու սիստեմների համար էլ, որովհետեւ դոցա մէջտեղն ու երկու ծայրերն են կազմում, երկու կողմից էլ ըստ ամենայնի իրար նման են: Հիւպօգօրիականը բիւզանդական սիստեմի մէջ առաջին ռաձնութիւնը լինելով առաջնորդում է դէպի միւս գամմաները, որոնք հիւպօյուով են սկսում, ինչպէս դօրիականը դէպի ոչ հիւպօյուով սկսողները. սակայն հին յունական սիստեմում «հիւպօ» չունեցողները համապատասխանում են բիւզանդականի հիւպօւորներին և ընդհակառակը հիւպօւորները բիւզանդականի ոչ հիւպօւորներին: Ուրիշ խօսքով՝ բիւզանդական պլազալ գամմաները բոնել են հին յունականի զլխաւոր (ոչ հիւպօվ) գամմաների տեղը և բիւզանդականի զլխաւոր գամմաները հին յունական պլազալ (հիւպօվ) գամմաների տեղը. երկուսն էլ իրենց տեղերը փոխել են:

Այս տեղերի փոփոխութեան ենթազրութիւնը ի նկատի ունենալով պէտք է ասել, որ բիւզանդական նշաները՝ բուն «ձայներ», թէ իրենց անուններով և թէ սկզբում օտարութիւնացող հերթական կարգով՝ գօրիական, լիդիական, փոխլիդիական, միքսօլիդիական=հիւպօգօրիական, բոլորովին համապատասխանում են հին յունական գամմաներին. ապա, ինչպէս երկում է, հէնց այս զլխաւոր գամմաների հետեւողութեամբ էլ կազմում են պլազաները, աւելացնելով իւրաքանչիւրի վերայ հիւպօ, առանց ի նկատի առնելու, թէ զոքա էլ կհամաձայնեն իրենց կարգով և անուններով հին յունական միւս գամմաներին:

Այժմ պարզ է, թէ ինչպէս բիւզանդական սիստեմը բիւզանդականից. նոյնը չի կարելի ասել կաթոլիկ եկեղեցու գամմաների մասին, մանաւանդ որ դոցա ունեցածը իրօք իսկական գամմաներ էլ չեն, որովհետեւ դոցա պլազալ գամմաները սկսում և վերջանում են բոլորովին ուրիշ ձայնով, քան այն ձայնով, որը գամմայի հիմքն է կազմում: Լատինական գամմաները աւելի շատ բիւզանդականի հետեւողութեամբ են կազմուել, և հին յունական անուններն էլ միայն յետազայ ժամանականերումն են իրենց վերայ առել, երբ Կասիօգօրի և Բոնցիուսի միջոցով այդ անուններին ծանօթացան, սակայն մի այնպիսի սիստեմ և բոլորովին հակառակ հերթական կարգով, որ այդ լատինական գամմաներից միայն հիւպօգօրիականն է հին յունականին համապատասխանում:

Այսպիսով պարզում է բիւզանդական սիստեմի բաւականին հին լինելը. զեռ ութերրորդ զարուց առաջ, ինչպէս Ալ-

կուինը վկայում է, պիտի իր վերջնական ձևակերպութիւնը ստացած լինի. միևնույն ժամանակ պարզուեց և ապացուցուեց «էխօսների» և նոցա «մարտիրների» բացարձակ ձայնական առտիճանը և իրար մէջ ունեցած յարաբերութիւնները, որ առաջին ձայնը՝ չ-ն մեր ձ-իցն է սկսում, Յ-ն՝ Ե-ից, Ղ-ն՝ Ը-ից և Զ-ն՝ Ձ-ից, ինչպէս և ՊԼ.Շ, ՊԼ.Յ, և ՊԼ.Ջ-Ն, Ձ-Ե.Ֆ.Գ-Ից: \*)

Հայ եկեղեցական ութը ձայների մասին թէ երբ են գործածութեան մէջ մտել և ում ձեռքով, հաւաստի յիշատակութիւններ չկան: Աւանդութիւնը, ինչպէս լատինացոց մէջ Գրիգոր Լին և Ամբրոսիոսին, ամեն ինչ՝ ինչպէս և ութը ձայների կարգաւորումը Ս. Սահակին և Ս. Մեսրոպին է վերակրում: Սակայն, որ հինգերորդ դարու առաջին կիսում ութը ձայների մասին խօսք լինել չէր կարող, երբ լատիների մէջ Կարլոս Մեծի ժամանակ էր միայն մուտք գործում, իսկ յունաց մէջ ութերորդ դարու սկըզբներից միայն յիշատակութիւն կայ՝ Ալկուինի հատակառի մէջ, այդ շատ պարզ է:

Ամենայն հաւանականութեամբ մեզ մօտ ես, ինչպէս յունաց և լատինացոց մօտ, սկզբից միայն չորս բուն «ձայներն» են մուտք գործել հէնց Սահակ-Մեսրոպի և միւս թարգմանիչների ձեռքով, որոնց զբէին է նույիրում մեր աւանդութիւնը շարականի մի պատկառելի մասը, և ապա ամենայն հաւանականութեամբ ութերորդ դարումն էլ յաւելի չորս կողմերը ներմուծուել:

Ասում ենք ամենայն հաւանականութեամբ և ոչ ըստ ամենայնի հաստատապէս, որովհետև այն յիշատակութիւնը, որ մեզ հիմք է դարձել այդ ենթադրութեան, քիչ անորոշ է, և տալիս է մի պատմաբան, որը՝ թէն ինքն էլ «կըթեռ» (է) ի հրահանգաընթերցման և երաժշտութեան» (Օքք. Հ. գլ.), բայց բաւականին չեռու է ապրում այդ ժամանակաշրջանից:

Ստեփանոս Օրբելեան, որ ապրում էր 13 դարու վերջերում և 14-ի սկզբներում, իւր «Պատմութիւն տանն Սիսական» գրքի մէջ մի ամբողջ գլուխ (գլ. լ.), յատկացնում է ութերորդ դարու առաջին կիսում ծագկող Ստեփանոս Խմաստասէր և անյաղթ հոետոր Սիւնեաց մետրօպոլիտին, որի կենսագրութիւնը կուղենար, եթէ կարողանար, հօմերական հաղներգութեան ձեռվ ներբռողել և սատեղծել տակս քաջուրակս: Իրօք շատ վառ գոյներով է ներկայացնում նորա Հայատանից փախստական զնալը, Պոլիս, Աթէնք և Հոօմ արած դիտական ճանապարհորդութիւնները, յու-

\* Յունական գամմաների մասին մինչեւ այստեղ քաղել ենք Օ. Ֆլայշերի III հատորի 5-րորդ գլխից:

նոց կայսրին և պատրիարքին իւր գիտութեամբ և իմաստութեամբ ափիբերան թողնելը, Հայաստան վերադառնալը, Սիւնեաց մետրոպոլիտ կարգուելը, Սիւնեաց վարդապետարանը գիտութեամբ ճռխացնելը և վերջապէս նորա եղերական՝ կարծես առասպելական, մահը, Ահա այս Ստեփաննոս Սիւնեցու մտաին, որի նոյն իսկ քոյր Սահակագուտալը<sup>1)</sup> «յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին», Օրբելիանը ասում է. «քաժանիաց եւ զութն ծայնսն և կարգեաց շարեաց զյարութեան օրհնութիւնսն. երգեաց կցորդս քաղցրահամս, յարմարեաց զատողովիս յինանց եօթն եղանակօր յոյժ խորհրդաւոր և զպահոցն, որ յաղուհացմն երգի...»:

Օրբելիան, Գանձակեցի, Գրիգոր Տաթեացի (Գիրք հարցմանց) և ուրիշները՝ բոլորն էլ 13, 14 և յետագայ դարերի մարզիկ, երբ սկսեցին հետաքրքրուել շարականի հեղինակների խնդրով, բոլորն էլ այն կարծիքին էին, հաստատոն աղբիւր չկար մեր աւելի հին մատենագրութեան մէջ, որ շարականի մեծագոյն մասը թարգմանիչների և նոցա աշակերտների ձեռքովն է գրուել, հետեւապէս և ութը «ձայները», որոնցով երգել էին, գոյութիւն են ունեցել դեռ Սահակ-Մեսրոպի ժամանակ. ոոյն հայեածքը և սրբագործում է յետագայում շարականի սկզբի հեղինակների ցուցակի մէջ «Նախ սուրբն Խահանակ և սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ծայնսն եւ զերկու ծայն ստեղիս»: Այգպիսի հայեածք ունեցող Օրբելիանը ուրեմն պիտի ենթադրէր և իրօք ենթադրել է, որ Ստեփաննոս Սիւնեցու առաջ արդէն ութը ձայն եղանակներով շարականների մի կոյտ կար, որոնց ըստ ձայների պիտի կարգաւորէր, իրարից բաժանէր: Իոկ մենք՝ երբ զիտենք, որ ութերորդ գարուց առաջ յաւելեալ չորս կողմերը գեռ զոյտւթիւն չունէին և ամենաշատը դոքա միայն ութերորդ գարում պէտք է մեզ մօտ մուտք գործէին, կամայ ակամայ կանդ ենք առնում 8 դարու ամենայայտնի, երաժշտական փառքով և իմաստասիրութեամբ հոչակուած Ստեփաննոս Սիւնեցու առաջ և ասում, ամենայն հաւանականութեամբ սա պէտք է Աթէնքում, Պօլսում և Հուօմում երկար ժամանակ դեղերելուց յետոյ իր հետ նաև չորս կողմերի վարդապետութիւնը բերէր և հէնց ինըն էլ, ինչպէս վերոյիշեալները վկայում են, եօթ, ութ ձայնով եղանակ-

<sup>1)</sup> Որ և ի ներքոյ վարագուրի նստեալ ուսուցանէր զբազումս, արար կարգս և մեղեդիս քաղցր եղանակաւ, յորոց մեծ Սրբունին Մարիամ, որ իւրով անուամբ էր յօրինեալ... և այլն (նոյն գլուխ):

ներ յօրինէք<sup>1)</sup>: Այսպէս չենք սխալուի, եթէ ասենք, որ Օրբելիանի յիշատակութեան հիմքը այս պատմական իրողութեան դարերի ընթացքում արդէն մժնացած յիշողութիւնն է եղել:

Վաղուց նկատուած էր, որ հայ եկեղեցական ձայները իրենց քանակովը, երկու խմբի՝ բուն ձայների և կողմերի չորսնորս բաժանուելովը ըստ ամենայնի համապատասխան են բիւզանդականին և լատինականին, սակայն սորանից այն կողմը այլևս չէին անցնում, այս նմանութիւնը համարում էին միայն ծնւաւկան, գամմաներ չէին ընդունում և ամեն ինչ քառալարերի անվերջ շղթայով էին բացատրում:

Բայց այդպէս է. արգեօք մեր եկեղեցական «ձայները», քանի որ մեզ մօտ ուրիշ բացատրութիւններ չկան, բացի Գաբրասաքալեանի թարգմանական թերի տեղեկութիւններից, Քրիզանդերի պապադիկէի օրէնքներին չեն ենթարկւում:

Նախ այս նկատենք, որ հին յունական անունները՝ դորիական, լիգիական և այլն, ինչպէս և միջնադարեան ռառներ, ռեանք և այլն անունները եկեղեցական ձայների համար ամեններն չեն գործածուում և մեր գրականութեան մէջ դոցա մասին ոչ մի յիշատակութիւն չկայ (բացի Գաբրասաքալեանից՝ այն էլ միայն միջնադարեանների մասին), այլ մեր ութը ձայները կոչւում են առաջին ձայն արտայայտած ԱՉ-ով, եկրորդ ծայն՝ ԲՉ-ով, երրորդ ծայն՝ ԳՉ-ով, չորրորդ ծայն՝ ԴՉ-ով, առաջին կողմ՝ Ակ-ով, աւագ կողմ՝ Բկ-ով. վառ ծայն՝ Գկ-ով և վերջ ծայն՝ Դկ-ով:

Դժուար չէ ասել,որ այս առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ կոչումները յունարէն պապադիկէում յիշուած ործուց, ծեներու, թօւուց, տէտրուց բառերի՝ դասական թուականների թարգմանութիւնն է. չմոռանանք յիշել, որ լատինականումն էլ այս նոյն դասական թուականներն էին գործածուում հէնց նոյն յունական բառերով: Գկ-ի վառ անունը (Գրաք. վառիս) յունական Յաρօս բառն է հայկական արտասանութեամբ, ինչպէս և Յարօս վառիա էին դարձել առողանութեան մէջ, ինքն ըստ ինքեան մի մեծ ապացոյց հայկական և յունական գամմանների իրար հետ ունեցած առնչութեան: Աւագ կողմ և վերջ ծայն կոչումների ծագումը գեռ անորոշութեան մէջ է թաղուած, սակայն անորոշութիւնը իդուր կասկածներ թող չյարուցանէ, հնում այդպէս չեն կոչուել, այլ ինչ-

<sup>1)</sup> Բատ այսմ՝ աւանդութեամբ ութերորդ դարուց առաջ այս կամ այն անձնաւորութեանը վերակրուած շարականների կողմ—պլազալ եղանակները աւելի յետագայ դարերի արգիւնք պէտք է համարել, օր. Անծինը նովիրեալքը եթէ հաստատապէս կոմիտասկաթուղիկոսն է պրել, այնուամենայնիւ Գկ-ով չի երգուել, այլ մի որևէ քուն ծայնով:

պէս առաջին կողմը, միւսներն էլ երկրորդ կողմ՝ երրորդ կողմ՝ և չորրորդ կողմ՝ են կոչուելիս եղել։ Օք. այս գլուխ սկզբում բերած «Զայնից գիւտք ըստ Փիլիսոփայից» կտորի մէջ յիշում է «Երկրորդ կողմն ատեղն ողջոյն քահանայից», ապա մի ուրիշ ձեռագրում Ներսէս՝ մեծ գիւտնականի (Շնորհալու) մասին առւում է, «Քանզի նորա է յարութեան օրհնութիւնն երրորդ կողմն»։

Դրութեան ձեն էլ յունականի հետեւզութեամբ է. վերցրել են հայերէն լեզուի առաջին չորս տառերը՝ Ա, Բ, Գ, Դ, որոնք մեր լեզուի մէջ թիւ էլ են ցոյց տալիս և աւելացնում են իւրաքանչիւրի կողքին Դշունի թարգմանութիւն՝ ձայն բառի առաջին տառը՝ Զ։ Կողմերի գրութեան մէջ էլ վերևի սկզբունքն է պահուած, վերցրել են էլի առաջին չորս տառերը՝ Ա, Բ, Գ, Դ, աւելացրել են կողմ (պլագիօս) բառի առաջին տառը՝ Կ և ըստացուել է՝ Ակ, Բկ, Գկ, Դկ։

Ուրեմն անունները բոլթրովին նոյն են Բիւղանդականի հետ, իսկ գրութեան ձեփի մէջ էլ միակ, ոչ էական տարբերութիւնը այն է, որ ինչպէս Բիւղանդականում միայն պլագալների համար ուժ, կրճատումն են կցում, հայկականում՝ ինչպէս կողմերի համար Կ, այնպէս էլ ձայների համար ձայն բառի կրճատումը՝ Զ տառն են աւելացնում Ա, Բ, Գ, Դ-ին, դորանով երեկի աշխատել են մի սկզբունքի բերած լինել կողմերի և ձայների գրութեանց ձեր։<sup>1)</sup>

Սյժմ տեսնենք ինչ յարաբերութեան մէջ են այդ ութը ձայները, բիւղանդական Դշուների հետ միասին հոմապատասխանում են պապադիկէի տուած գամմաներին։

Շարականների եղանակների մասին, որոնք այս ութը ձայների վրայ են յօրինուած, ոչ մի ուսումնասիրութիւնն չկայ, հետևապէս և այդ ութը ձայների գամմայական կազմութեան մասին կարելի կլինի խօսել միայն այն գէպքում, երբ շարականների եղանակների գոնէ մի համառօտ նկարագիրը կտրուի այստեղ։

Առաջին ձայն (ԱԶ). մեր շարականներից 126-ը այս ձայնին են պատկանում. Իրենց կազմութեամբ և բնաւորութեամբ երկու գլխաւոր խմբի են բաժանուած՝ Բուն Առաջին ձայնն է կարծուածքը ԱԶ. Բուն ԱԶ են՝ «Սուրբ ես տէր» (921 եր. 2.), «Երկնաքաղաքացի» (464), «Բնդ լուսանալ» (449) և այլն։ Դարձուածքը ԱԶ են՝ «Ի քէն հայցեմք» (164), «Համբարձի» (205), «Այսօր յարեաւ» (441) և այլն։ Կան շարականներ, որոնց մէջ երկուսն էլ

<sup>1)</sup> Երեկի լեզուական՝ բառերի գասաւորութեան տեսակէտից է յառաջացել և այս տարբերութիւնը, որ յոյնը ասում է ձայն առաջին (Դշուն շ), կողմ առաջին (Ու. շ) և այլն, իսկ հայը՝ առաջին ձայն (ԱԶ), առաջին կողմ (ԱԿ) և այլն։

Դարձուած Աջը գրուած է խօ նէ պա փօ է վլէկիսվար  
թէ խօ՝ ց ա Ե ց է ս թ գ զամմայսվ, որը նոյն է ինչ որ հին  
յունական և քիւզանդական հիւզողօրիսկանը (տես եր. 45),  
միայն քառեակ բարձր փոխադրուած: «Գովեան Երուսաղէմ»-ը, որ  
տարբերում է այս ձայնի բոլոր դարձուածքներից նրանով, որ  
պտտում է ըստ մեծի մասին գամմայի երկրորդ քառեակի  
շուրջը, միակ ապացոյցն է այս զամմայի ծ-ից 6-ի կէս լինելուն,  
որովհետեւ միւս շարականները գամմայի վեցեակը չեն ցոյց  
տալիս եղանակի մէջ: Եղանակների ընդհանուր ծաւալն է թէ  
խօ նէ պա փօ է ս թ գ ա Ե ց է ս թ կը կնւող ձայնն է խօ=g, կէս  
վերջաւորութիւնն է թ=թէ, յաճախ նաև ց=իմօ, տան, ինչպէս և  
վերջին վերջաւորութիւնն է խօ=g:

Երրորդ ծայն (ԳԶ). 145 շարսական այս ձայնին են պատկանում. սրանք հրկու խմբի են բաժանուում՝ ըստ ԳԶ-ի և

դարձուածք ԴԶ-ի: Բուն ԳԶ-ի գամման է իսօ ՆԵՂԻԱՎԱՐ պակի-  
տվեր փօ է վԵՂԻԱՎԱՐ թէ խօ<sup>g</sup> ց ա հ ե ծ է ֆ ց. վԵԳԵՎԱԿԸ  
վԵ=Յ է գառնում միշտ, երբ եղանակը թէ=ֆ-ի է բարձրանում. իսկ  
դարձուածքինը նոյն ձայնաշարն է, միայն վԵԳԵՎԱԿԸ միշտ վԵ=Յ  
է: Համեմատելով բիւզանդականի հետ տեսնում ենք, որ այս  
գամման նոյն փոխականին է՝ ս ծ ե ֆ ց ա բ ց (տես եր. 45),  
նախ քառեակ ցած փոխադրուած և ապա երկեակը (ու մասամբ  
վԵԳԵՎԱԿԸ միայն բուն ԳԶ-ում) կէս աստիճան ցած իջեցրած (ց ա ս  
հ ե ծ է ֆ ց): Եղանակների ընդհանուր ծաւալն է ց ա հ ե ծ  
է(ս) ֆ, դարձուածքում բարձրանում է նոյնիսկ օկտաւա ց: Կէս  
վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և վԵՐՋԻՆ վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ց-ի են  
հանդչում, իսկ տան վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, մեր կարծիքով  
թիւրիմացութեամբ, քառեակ բարձր՝ օ-ի: Բուն ԳԶ-ից իրրե  
օրինակ կարող ենք յիշել՝ «Լուսաւորեա երուսաղէմ» (709),  
«Զօրհներգութիւնս բանաւոր» (282), «Ուրախ լեր» (733), իսկ  
դարձուածքից՝ «Որ խոնարհեցար յերկնից» (992), «Հոգի իմ»  
(1050), «Տէր զլուր» (1052), որոնք միայն վԵՐՋԻՆ վԵՐՋԱԼՈՐՈՒԹԵԱՆ  
ժամանակ են ց ա ս հ ե ծ քառալարը ցոյց տալիս: Դարձուածք-  
ները աւելի վեհ ու խրոխտ տպաւորութիւն են թողնում շնոր-  
հիւ իրենց մաժօր կազմութեան և բարձր քառալարի: «Զըեզ  
օրհնեմք»-ը (433), որ այս դարձուածքների, ինչպէս և ամբողջ  
շարականի ամենազեղեցիկ գոհարներիցն է, աչքի է ընկնում  
իւր կրկնակով և վԵՐՋԱԼՈՐՈՒԹԵԱՄԲ, որտեղ ի-ի փոխարէն եր-  
բեմն էլ Ե-է ցոյց տալիս և վԵՐՋԱՆՈՒՄ է ոչ ինչպէս միւսները  
և կամ ց-ով, այլ ցածի վԵ=Յ-ով:

Չորրորդ ծայն (ԴԶ). 210 շարական այս ձայնին են պատ-  
կանում. կարելի է երեք խմբի բաժանել՝ բուն ԴԶ, 1 ԴԶ դար-  
ձուածք և 2 ԴԶ դարձուածք: Բուն ԴԶ են՝ «Որ զշնորհս» (870),  
«Հրաշափառ» (675) «Համբառնամ առ քեզ» (306) և այլն: Կէս  
վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆԸ մեծ մասամբ ց=լսօ է, տան վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒ-  
ՆԸ (թերի) օ=փօ, վԵՐՋԻՆ վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆԸ ց=խօ:

1 ԴԶ դարձուածք շարականներիցն են՝ «Բազմերամ վեհա-  
ցունիցն» (1012), «Թագաւոր գոլով» (388), «Առաքելոյ աղաւնոյ»  
(623), «Կենդանարար» (616), որոնք կարծես ըուն Ակ-ի և ԴԶ-ի  
մի խառնուրդ են ներկայացնում, կրկնւող ձայնն է նԵ=Յ, տունը  
վԵՐՋԱՆՈՒՄ է միշտ նԵ=Յ-ով, բայց կէս վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
մեծ մասամբ և վԵՐՋԻՆ վԵՐՋԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ միշտ էլի ց=լսօ-ի  
են հանդչում:

2 ԴԶ դարձուածքի շարականներից են՝ «Երկնաւոր փեսայ»  
(663), «Աթոռ քրովբէական» (118), «Այսօր անսկզբնական» (113)

և այլն. «պահոց» և «յարութեան» ԴԶ ծանը հարցերը մինչև «գործքը» բոլորն էլ այս Ա դարձուածքին են պատկանում, «գործքից» յետոյ բուն ԴԶ-ին. Սորա զլիսաւոր տարբերութիւնը վերոյիշեալներից այն է, որ ի=պահն կրկնող ձայն է ներկայանում այստեղ; Կէս վերջաւորութիւնները մեծ մասամբ, տան և վերջին վերջաւորութիւնները միշտ ց=խօ-ին են հանգչում:

Այս բոլոր երեք խումբ շարականներն էլ գրուած են իո նէ պա փօ է վէկիսվար բէ խօ=ց ա ե օ է օ է գ գամմայով, որ նոյնն է ինչոր բիւզանդական Միքոյիլիականը՝ ծ է ֆ ց ա ի օ ձ, միայն հնդեակ ցած փոխադրուած:

Առաջին կողմ (Ակ): Այս ձայնին վերաբերող շարականները ամենից շատ են՝ թւով 828 հատ, համարեան կէսը ամբողջ շարականոցի: Երկու խմբի են բաժաննեում՝ Բուն Ակ և դարձուածք Ակ: Այս ձայնի «պահոց» բոլոր շարականները, «յարութեան», «մարտիրոսաց», «սննջեցելոց» և «աւագ օրհնութեանց» մեծագոյն մասը դարձուածք են. մնացածները՝ յատկապէս մեծ մեծ տօների «օրհնութիւնները» և «կանոնները» բուն Ակ են: Կան և շարականներ, որոնց մէջ երկումն էլ խառն են. ընդհանրապէս բոլոր «հարցերում» (օր. 210 եր., 486 եր. և այլն) «գործքն» ու «երկինքը» Ակ-ի շարականների մէջ դարձուածքի են փոխուում, թէն նոցա կրկնակներն ու մնացած տները էլի բուն Ակ-ով են երգեում: Բուն Ակ են՝ «Որ նախիմաց» (43), «Որք զարդարեցին» (827), «Քաջամարտիկ» (912) և այլն: Դարձուածք են՝ «Այսօր կանգնեցաւ» (418), «Ծով կենցաղոյ» (214) «Արարիչ Ած» (977). և այլն: Բուն Ակ-ի ընդհանուոր ծաւալն է ֆ ց ա ե օ է օ է ի ի բ բ կ ը ն դ հ ա ր ո ւ մ 209 երեսում). կրկնող ձայնն է օ=նէ և օ=փօ, կէս վերջաւորութիւնն է օ=նէ, տան վերջաւորութիւնն է կրկնն օ=նէ, իսկ վերջին վերջաւորութիւնը իջնում է օ=է-ի (44 եր. շարակ.). վերջաւորութիւններից առաջ, զործ է ածւում ԱԶ-ի պէս նորամուտ ցիս-ը փոխանակ ց-ի: Դարձուածք Ակ-ի ծաւալն է ֆ ց ա ե օ, կրկնող ձայնն է օ=նէ, կէս վերջաւորութիւնն է ց=խօ տան վերջաւորութիւնը՝ օ=նէ, երեմն՝ ց=խօ (801 եր.), վերջին վերջաւորութիւնն է բուն Ակ-ի նման օ=է:

Թէ բուն Ակ-ը և թէ դարձուածքը իրենց գործածական քառալարերով շատ նման են բուն ԱԶ-ին, միայն այն տարբերութեամբ, որ բուն Ակ-ում օ=երկրորդ փօ-ն և ձ=երկրորդ է-ն յաճախ գործածական են, իսկ որ զլիսաւորն է, թէ բուն Ակ-ը և թէ դարձուածքը վերջին վերջաւորութեան ժամանակ իջնում են

առաջին ձ=է-ի՝ բիւզանդական հիւպօրիականի հիմնածայնին, որի վրայ կազմուած գամմային՝ ձ ե ֆ գ ա բ ե ծ, մեր կարծիքով՝ համապատասխանում է և մեր Առաջին կողմը իր դարձուածքի հետ միասին (է վէ թէ խօ նէ պա փօ է):

Աւագ կողմ (ԲԿ). 108 շարական այս ձայնին են պատկանում. բոլորն էլ միատեսակ են. միայն մի շարական՝ «Ի գալրստեան աեառն» (987) առանձին բնոյթ և կազմութիւն ունի. հէնց այս շարականն էլ իր կազմութեամբ ամենից ցայտուն կերպով ապացուցանում է մեր Բկ-ի և բիւզանդական հիւպօլիդիական գամմայի նոյնութիւնը: Այս շարականի կրկնող ձայնն է ա=նէ, կէս վերջաւորութիւնը՝ բ=թէ և ց=խօ, տան վերջաւորութիւնը՝ ա=նէ, վերջին վերջաւորութիւնը բռնազրոսիկ կերպով ց=խօ: Այս շարականի գամման է նէ պա փօ է վէ կիսվար թէ խօ նէ՝ ա բ շ է ժ գ ա, որը նոյն է ինչոր հիւպօլիդիականը՝ ե ֆ գ ա բ շ է, միայն քառեակ բարձր փոխագրուած: Ունենը նաև պատարագի մէջ (հայկական ձայնագրութեամբ, Բ. տպ. 32 երես) մի «Հայր մեր», որ նոյն այս գամմայովն է գրուած՝ առանց փոխագրութեան (Մ. Եկմալսանը իզուր ի=պահ հ-ի է փոխել):

Մնացած շարականները, որոնց ընդհանուր ծաւալը ա բ շ է շ է ֆ գ ձայների մէջ է ամփոփուում և ըստ ամենայնի կարելի էր պնդել, թէ «Ի Գալստեանի» գամմայովն են գրուած՝ ա բ շ է շ է ֆ գ ձ-ով, իրենց վերջաւորութիւններով (կէս վերջաւորութիւն ց, կամ ն, կամ օ, կամ մ, կամ է, տան, ինչպէս և վերջին վերջաւորութիւնները՝ օ, վերջաւորութեան ժամանակ ե-ն հ-ի է փոխած անշուշտ ԱԶ-ի ցիս-ի նմանութեամբ) և իրենց ուրոյն բնոյթով այդ գամմային պատկանելու հարցը կասկածի տակ են ձըդում, որովհետեւ մի ուրիշը կարող է ասել, թէ ոչ, գրուած են դոքա հիւպօփոխիական գամմայով՝ ֆ գ ա բ շ է ժ գ ա բ շ է ֆ (թէս վերջաւորութիւնները էլի կհակասէին), միայն քառեակ բարձր փոխագրութեամբ՝ ա բ շ է ժ գ ա բ, մանաւանդ որ ամենագործածական քառալարը ա բ շ է ժ գ ա բ, մանաւանդ որ ամենագործածական կառավարը միայն խազերի վերծանութիւնը կարող է պարզել: Այս շարականներիցն են՝ «Իմաստուն կուսանք» (398), «Թաջն կենարար» (774), «Ուրախ լիր» (384) և այլն:

Վառ ծայն (ԳԿ): Վառ մակդիրը յունարէն Յարն է, հայկական տառադարձութեամբ.<sup>1)</sup> այս գլխի սկզբներում գեռտե-

<sup>1)</sup> Այս տառադարձութիւնն էլ մի մեծ ապացոյց է, որ վառ կոչումը 8-րորդ զարում կամ նրանից յետոյ են փոխ առել հայերը, որովհետեւ մեր գրականութեան սկզբնական դարերում յունարէնից վերցրած բառերի մէջ Յ-էն մնում է էլի ը և ոչ թէ փոխում վ:

սանք, որ Գարասաքալեանը Յշոնչին վասիս է անուանում (տես եր, 38): Տեսանքնակ որ բիւղանդական գամմաններից հիւղօփոխւզիականնէ, որ Յարիչ է կոշում, ուրեմն մեր վառ ձայնը (Գկ-ը) պիտի որ համապատասխանէ ըիւզ, հիւղօփոխւզիականին. և իրօք այս ձայնին պատկանող 96 շարականն էլ թէ իսօնէ պա փօ է վէ թէ՝ f g a b c d e թիւզ. հիւղօփոխւզական գամմայովն են գրուած (տես երես 45): Եղանակների ընդհանուրը ծաւալն է f g a b c, կրկնուղ ձայնը՝ պա=b, կէս վերջաւորութիւնը՝ g կամ Ծ, տան վերջաւորութիւնը՝ g=իսօ, ժամագրքում՝ Ծ=պա, վերջին վերջաւորութիւնը՝ g=իսօ: Այս գ=իսօ վերջաւորութիւնները պէտք է ճշգրտել մեր կարծիքով վերջ ձայնի ազգեցութեամբ ևն շփոթում, մանաւագ որ նման են շարականները: Գործածական քառեակն է թէ իսօ նէ պա=f գ ա Ծ: Այս շարականներիցն են՝ «Ակրինք ամենայն» (332), «Տուր մեղ տէր» (287), «Յաղթող» (833), և այլն: Մի քանի շարականների մէջ, ինչպէս երես 546, 547, 549, 550 և 950, փոքրիկ մօղուլիացիաներ են արուած դէպի ԳԶ-ը: (Մանօթութիւն. վառ ձայնի մէջ փօ-ի փոխարէն միշտ պակիսվեր կզանէք, բայց այդ սխալէ, զործնականի մէջ միշտ փօ=c է երգուած, երեւ յունական թէօրիհայի ազգեցութեամբ է, ուր <sup>3/4</sup> աստիճան էլ գոյութիւն ունի):

Վերջ ձայն (ՂԴ). 191 շարական այս ձայնին են պատկանում. երկու խմբի կարելի է բաժանել՝ բուն Դկ և դարձուածք Դկ, այս շարականների <sup>5/6</sup> մասը բուն Դկ է, իսկ մնացածը գարձուածք, որոնց մեծ մասը ստեղիներ և ծանր շարականներ են: Բուն Դկ-ը գրուած է բիւզանդ. հիւղօփոխուզիական գամմայով՝ իսօ նէ պա փօ է վէ թէ խօ=g ա բ ս դ ե ֆ գ. ընդհանուր ծաւալն է ս դ ե ֆ գ ա բ ս դ, կրկնուղ ձայնն է Ծ=պա, կէս վերջաւորութիւնը՝ g=իսօ, երբեմն Ծ=ըէ, տան վերջաւորութիւնը՝ g=իսօ, վերջին վերջաւորութիւնը ցածիր c=փօ. (Այս վերջին վերջաւորութիւնը իրօք դարձուածքինն է, աւանդութիւնը ցփոթել է, պէտք է վերջանար ց=իսօ). գործածական բառեակն է թէ իսօ նէ պա=f գ ա Ծ: Այս տեսակիցն են՝ «Առաքեալ և նախավկայ» (138), «Արևելք գերարփին», (1071), «Որ յանէից» (1020), «Էջմիածինն ի հօրէ» (737) և այլն:

Դարձուածք Դկ-ի բուն Դկ-ի և երկեակն ու վեցեակը փոքրացրած ԳԶ-ի (փօ էկիսվար վէ թէ խօ նէկիսվար պակիսվեր փօ՝ c des e f g as h c) խանութեղն է. սրանցից են՝ «Անձինք նուիրեալը» (690), «Նորահրաշ» (890), «Անձառնելի» (899) և այլն: Կէս վերջաւորութիւնն է թէ=f կամ c=փօ, տան վերջաւորութիւնը՝ թէ=f, «Անձինք նուիրեալը» c=փօ, վերջին վերջաւորութիւն՝ c=փօ (ցածիր):

Դնենք իրար մօտ բիւղանդական գամմանները և տրադիցիայով՝ մինչեւ 1872 թիւը հասած և ապա Ն. Թաշնեանի ձեռքով ձայնագրուած շարականի եղանակների հիմք կազմող մեր որոշած ու դուրս բերած գամմանները.

如上所述， $\tilde{f}_d$  在  $\Omega_d$  上的值由  $\tilde{f}_d(\eta)$  确定。

٧٦

“*Y*, *c d e f g a b c = h o u k l h u k l u r u k a k h u k l r - p h o t k l - p k l h o (p n, g u s)*

96

„ $\beta$ “ b c d e  $\neg f$  g a  $\neg b = uqu$   $\psi_0$  t  $\psi_L(\psi_L(huhup)) \neg \rho L$   $\mu_0$   $u_L \neg uuu$

12

“ $\alpha$ ”  $a \sim b$   $c \sim d$   $e \sim f$   $g \sim h$   $a = b$   $c = d$   $e = f$   $g = h$

*πλα.* δι. σε αντί βερενίδης γέγονος = λουλούδια

۷۶

卷之三

974

<sup>11</sup> See, e.g., *W. H. Parker, The English Language in America, 1607-1776* (1930).

134

2.  $d \circ f \circ g \circ h = k$

• 44

Այս համեմատութիւնը պարզ ցոյց է տալիս, որ հայկական ութը ձայները իրենց կազմութեամբ և իրար վերաբերմամբ ունեցած յարաբերութեամբ նոյնն են ինչ որ բիւզանդականը, որ հայ եկեղեցական երաժշտութիւնը այդ յունական-բիւզանդական գամմաների վրայ է ձևուել, կազմակերպուել. և իրօք մեր բուն ԱԶ-ը (առանց դարձուածքի) իւր ամբողջ և կէս միջոցների յաջորդականութեամբ և այս սխտեմի մէջ ունեցած դիրքով նոյնն է, ինչ որ բիւզանդական գորիականը (Դշ. ա), մեր ԲԶ-ը նոյնն է ինչոր լիդիականը (Դշ. թ), մեր ԳԶ-ը նոյնն է (քառեակ ցած փոխազրութեամբ և թերևս միայն յետագայ դարերում արևելեան կամ տեղական ազդեցութեամբ, երկեակն ու մասամբ վեցեակը փոքրացրած ձեռվ) ինչ որ փոխեգիականը (Դշ. ՛), մեր բուն ԴԶ-ը նոյնն է միայն հնգեակ ցած փոխազրութեամբ, ինչ միքսօլիդիականը, որ հաւասար է հիւպօդօրիականին (Դշ. ծ), ապա մեր բուն ԴԿ-ը նոյնն է ինչ հիւպօմիքսօլիդիականը (ՊԼ. ծ), մեր ԳԿ-ը նոյնն է ինչ հիւպօմիքսիականը (ՊԼ. թ), միայն քառեակ բարձր փոխազրութեամբ, վերջապէս մեր ԱԿ-ը նոյնն է ինչ հիւպօդօրիականը (ՊԼ. ա):

Այս փոխազրութիւնները հայկական շարականի մէջ թող չշփոթեցնեն ընթերցողին, շատ բանական պատճառով են յառաջ են եկել. ձայնազրողները, որոնք անշուշտ գործնականով են առաջնորդուել, աշխատել են յարմարուել մեր ձայնի սահմաններին և առանց ի նկատի առնելու «ձայների» իրար վերաբերմամբ ունեցած յարաբերութիւնը, բաւականանալով միայն կէս և ամբողջ ձայնամիջոցների յաջորդականութեան պահպանութեամբ հնգեակ կամ քառեակ ցած կամ բարձր են ձայնազրել. այսպէս ԴԶ-ը երկրորդ է-ից, ԳԶ-ը երկրորդ փօ-ից սկսելով, կամ ԱԶ դարձուածքը առաջին է-ից, ԲԿ-ը առ. վէ-ից և այլն, երգչի երևակայութիւնը պիտի երկու օկտավից աւելի մեծ սահմանների մէջ դնէր. այս անտեղութեան առաջն առնելու համար նոքա գործնականով ղեկավարուելով, ինչպէս յոյները, այդ ութը ձայները փոխանակ ութը տարեիր ձայներից սկսելու, սկսում են միայն միքանի այնպիսի բարձրութեամբ միջին ձայներից, ինչպէս առաջին ըէ, խօ, նէ, պա, որոնք բոլորին ել մատչելի կարող են լինել:

Ապա թող չշփոթեցնեն ընթեցողին այն զարտուղութիւնները, որ երբեմն եղանակները չեն վերջանում գամմայի հիմնաձայնով: Նախ պէտք է ի նկատի ունենալ, որ մեր դիտողութիւնները 1000-աւոր տարիների հնութիւն ունեցող, աւանդաբար մեր ձեռքը հասած շարականների վերայ է կատարուել,

այն էլ մի վարիանտի՝ իսկ աւանդութիւնը յաճախ կարող է շփոթել, խեղաթիւրել, տեղական երաժշտութեան ազդեցութեանը հնթարկուել, բայց այդ խեղումները, շփոթումները և ազդեցութիւնները այնքան զօրել չեն, որ կարողանան տապալել մեր կառուցուածքը. եթէ մի ԲԶ-ի կամ ԲԿ-ի վերջաւորութիւնները չեն համապտասխանում գամմայի հիմնաձայնին, բայց դորս փոխարէն ԱԶ-ը, ԳԶ-ը, ԴԶ-ը, ԱԿ-ը, ԳԿ-ը այնպիսի հարազատութեամբ են պահել իրենց գամմանները, որպիսին նոյնիսկ յունական աւանդութիւնը չի պահել, ինչպէս նկարագրում են Դուգուգրէ, Գայսուեր, Ռերուրս և ուրիշները: Եւ եթէ նոյնիսկ երբէք մեր խաղերը չպարզաբանուեն, միայն հէնց այս անադարտ մնացած ձայները բաւական են ապացուցանելու, որ մեր գամմանները և յունական-բիւզանդական գամմանները տարբեր բաներ չեն, այլ այն նոյն եկեղեցական երաժշտական սիստեմն է, որ ընդհանուր է գարձել ամբողջ բրիստոնեայ աշխարհի համար նոյն ձեռվ և նոյն ճանապարհով, ինչ որ ս. գիրքն ու աւետարանը:

Այս պատկերից մի ուրիշ՝ խաղերի վերծանութեան համար ահագին նշանակութիւն ունեցող, հիմնաւոր եղբակացութիւն ևս պէտք է անենք. եթէ ըստ ամենայնի հայերը բիւզանդական գամմանները իրենց անուններով, գրութեան ձեռվ, ամբողջ և կէս միջոցների յաջորդականութեամբ և վերջապէս իրենց ունեցած նոյն գիրքով այդ սիստեմի մէջ վերցրել, իւրացրել են և զորանով էլ առաջնորդուել, ինչո՞ւ պէտք է նաև Ա(Զ), Բ(Զ), Գ(Զ) և Դ(Զ) տառերը բիւզանդականի նմանութեամբ հին յունական ա, թ, շ, մ, այբբենական նօտանների բացարձակ նշանակութիւնը չունենան մեր խաղաւորած հին շարականի մէջ. այլևս կարիք կայ ապացուցանելու, որ ԱԶ, ԲԶ, ԳԶ, ԴԶ, և ԱԿ, ԲԿ, ԳԿ, ԴԿ սարու-ները, ինչպէս յունականում (տես եր. 47), այնպէս էլ հայկականում խաղերի ընթերցանութեան ժամանակ ճիշտ նոյն նշակութիւնն են ունեցել և ունեն այդ խաղերի բացարձակ նշանակութեան համար, ինչ այժմեան զծային սիստեմի մէջ բանալինները:

Խաղերի լուսաբանութիւնը ապագայում շատ խնդիրներ կպարզէ, բայց որ հէնց այդ խաղերի ուսումնասիրութեան և լուսաբանութեան համար մեծ անհրաժեշտութիւն և արժէք ունէր նախ ուժը ձայների վարդապետութեան ուսումնասիրութիւնը, այդ կարող է իւրաքանչիւր բանիմաց ընթերցող հէնց ինքը դատել:

## ՎԵՐԱԲԵՐԵ

Մեր այս ուսումնասիրութեան գլխաւոր արդիւնքն այն է, որ այժմ պարզ է, թէ մեր հին երաժշտութեան տեսականը որքան ինքնուրոյն է, ով է ազդողը և ով ազդողը. Այս խնդիրների լուծումը անհրաժեշտ էր առհասարակ հայ երաժշտութեան քննական պատմութիւնը գրելու և մասնաւորապէս հայ եկեղեցական երաժշտութեան ծագումն ու զարգացումը լուսաբանելու համար:

Ճիշտ է, մեր խօսքը եղել է միայն տեսականի վերաբերմամբ, բայց հէնց այդ տեսականի ուսումնասիրութիւնը այն միակ հաստատուն հողն է ներկայանում, որի վերայ միայն յենուելով ապագայ երաժիշտ-քննադատը կըկարողանայ հայ երաժշտութեան այնքան առկախ մնացած, մութն ու կնջոստ հարցերը լուսաբանել և լայն հայեացք ունենալ այն պատմական երևոյթների մասին, որոնց մինչև այնժմ միայն ազգայնական նեղ ոգով ենք մօտեցել:

Մինչև այժմ թէ աշխարհական և թէ հոգեորական օրօրուել են այն զգացումով, թէ այն բոլոր հոգեոր եղանակները, որոնք հայերէն բառերով են երգւում և դարերէ ի վեր սրբագործուել, նուիրական են գարձել, բոլորն էլ ազգային ինքնուրոյն ստեղծագործութիւններ են: Նոյն իսկ եղան մարդիկ որոնք ժողովրդական մի քանի մօտիւների և եկեղեցական մի քանի շարականների մէջ նմանութիւններ նկատելով, շտապեցին յայտարարել, թէ մեր եկեղեցական եղանակները սկզբնապէս եղել են հայ ժողովրդական երգեր, որոնք եկեղեցու համեմատաբար ազատ զրկում աւելի զարգացան և վեհ ու փառաւոր կերպարանք ըստացան, մինչդեռ ուամիկ ժողովուրդը մշտատն արհաւիրքների մէջ իւր աշխարհիկ երգը ճգմուած և նախնական դրութեան մէջ թողեց:

Սակայն այս ուսումնասիրութիւնից յետոյ այժմ մարդ տրամադիր է հակառակը մտածելու. արդիօք մեր եկեղեցական ութը ձայն եղանակներն էլ իրենց սկզբնական ձևով քրիստո-

նէական եկեղեցու ստեղծագործութիւն ու սեփականութիւն չէն և չին մտել մեղ մօտ այն ձևակերպութեամբ, ինչպէս որ նորա հէնց սկզբից հանդէս են եկել քրիստոնէութեան որորան յունական աշխարհում. եկեղեցականի և ժողովրդականի միջև նկատուած նմանութիւննելը չպէտք է բացատրել նրանով, որ եկեղեցական երաժշտութիւնն է ազդողը ժողովրդական ստեղծագործութեան վերայ ճիշտ այնպէս, ինչպէս միջնադարիան կրօնական միստիկ կեանըը գեղարուեստի մասցած բոլոր ճիւղերի վերայ է իւր կնիքը զրել և վերջապէս հայկականը միայն այն չէ, ինչ որ հարևան ազգերից չէ փոխ առնուած:

Եւ ինչու. որովհետև մեղ համար այժմ պարզ է, որ մինք վերցրել իւրացրել ենք յունական երաժշտութեան տեսականը՝ խազերը, զամմանները, թերևս և եղանակները յօրինելու կանոնները, որոնք անշուշտ ինչպէս այժմ և միջնադարում, այնպէս էլ ամեն ժամանակ գոյութիւն են ունեցել: Իսկ այդ չափած, ձևակ օրէնքներն ու կանոնները ամեն ինքնուրոյնութիւն կարող էին մեռցնել:

Հինգերորդ դարու կամ թէկուզ մինչև իսկ 12-րորդ դարու հայ երաժիշտը իր շարականը յօրինելիս, երևակայեցէք որ ստիպուած էր օրինակի համար որեէ զամմայի հիմնաձայնով սկսելու և վերջացնելու, երկու երաժշտական նախադասութիւնից պիտի կազմէր տունը, որոնցից իւրաքանչիւրը ուրոյն վերջաւորութիւն պիտի ունենար, դիմող կամ կրկնուող ձայնը այս պէտք է լինէր, այդ կրկնուող ձայնից այսքան կարելի էր բարձրանալ և այսքան իջնել երեք ամբողջ աստիճան իրար ետևից չէր կարելի բարձրանալ կամ իջնել և այն ևայլն... օրէնքներ, որոնք իրօք կան և աւանդութեամբ պահուած այսօրուայ շարականի մէջ էլ կարելի է մատնանիշ անել: Աւելացրէք այս բանի վերայ և այն գլխաւոր հանգամանքը, որ եղանակի ամենաքննորոշ տարրը՝ ոիթմը եկեղեցական երաժշտութեան մէջ մանաւանդ սկզբնական դարերում, մեղ մօտ մինչև Ն. Շնորհալին, էական նշանակութիւն չի ունեցել և սաղմային զրութեան մէջ է եղել. այժմ այդ պայմաններում ի՞նչ աչքի ընկնող տարրերութիւն կարող էր ունենալ երաժշտական տեսակէտից այդ հայի յօրինածը մի յոյնի ստեղծածից, երբ երկուսն էլ նոյն ուղիով պիտի շարժուէին:

Եւ իրօք, եթէ մինք առայժմ հնարաւորութիւն չունենք խազերը լուսաբանուած չըլինելու պատճառով գիտական կեր-

պով ապացուցանելու, թէ ինչպէս է յունական եկեղեցական երգը օրինակ դարձել հայ եկեղեցական երգի առաջ գալուն, բայց չենք կարող չշեցանել, որ տասնեակ դարեր իրարից անջատուած եկեղեցիների եղանակների մէջ այն աստիճանի մէծ և աչքի ընկնող նմանութիւն կայ, որ մենք եթէ սորա կամ նորա բառերը անջատենք, գժուար կլինի ջոկել իրարից, թէ որ եղանակն է հայկականը և որը յունականը:

Յամենայն դէպս լնորինակութիւնը միայն տեսականի վերաբերմամբ չէ... Սակայն սպասենք նոր փաստացի ուսումնասիրութիւնների:





Ա թ ի զ լ ի ն ե թ

Էջ	Տող	Տպուած է	Թիստ է լինի
11	19	գձահնն	գձայնն
11	22	գմդ, գմդ	գմդ, գմտ
12	5	համապասասիան	համապատասխան
16	33	ներկեւանաս	ներվեւանաս
24	20	հեռում	հեռու
48	21	այդպիսի	այդպիսի
48	26	դարուց	դարուց





